3-9 ԱՊՐԻԼ 2026 ՈՒՐԲԱԹ 012(5880)

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Իսրայելի դատարանները կչեղարկե՞ն մահապատժի կիրառումը

Մարտի 30-ին Քնեսեթը հաստատեց վիճահարույց մի օրենք՝ մահապատիժ է նախատեսում այն պաղեստինցիների համար, որ իսրայելցիներին ահաբեկչական դրդապատճառներով սպանում են, իսկ պաղեստինցիներին սպանող իսրայելցիների համար չի սահմանում: Գերմանիա-Իսրայել ընկերակցության նախագահ Բեքը Deutschlandfunk-ի ապրիլի 2-ի եթերում հույս հայտնեց, որ Իսրայելի դատարանը կչեղարկի դրա կիրառումը, քննադատեց ԳԴՀ մարդու իրավունքների հանձնակատար Կաստելլուչիի հայտարարությունը, թե «մահապատիժ չպետք է լինի ԳԴՀ գործընկեր երկրներից ոչ մեկում»: «Երկակի ստանդարտ է: Այն ամրագրված է Ալժիրում, Եգիպտոսում եւ ԱՄՆ-ում»: Կաստելլուչիի «խտրական օրենք է» գնահատականը «ամբարտավան քարոզ» անվանեց ԳԴՀ-ում Իսրայելի դեսպան Պրոզորը:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա**

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Խաղաղասիրությունը հեռու է Թրամփից, կամ՝ «վատ դիվանագիտության արվեստը»

Վերնագրի չակերտված մասը անգլիական The Economist շաբաթահանդեսինն է եւ խտացնում է քաղաքագիտական շատ շրջանակների կարծիքը Մ. Նահանգների նախագահի վարած քաղաքականության վերաբերյալ, ոչ միայն դրսում, այլեւ հենց նրա ղեկավարած երկրում: Այն՝ ինչ վերջին օրերին տեղի է ունենում ամերիկյան մեծ քաղաքներում ու հրապարակներում, իսկապես աննախադեպ է առնվազն վերջին 50-60 տարիների համար: «No Kings» («Ո՛չ թագավորներին») կարգախոսով բողոքի ցույցերը Նյու Յորքում, Վաշինգտոնում, Բոստոնում, Չիկագոյում, Ֆիլադելֆիայում, Լոս Անջելեսում եւ այլուր ընդդեմ նախագահ Թրամփի ու նրա վարչակազմի վարած քաղաքականությանը՝ դժգոհության արտահայտությունն է ամերիկացի ժողովրդի, որի 62 տոկոսը, ըստ վերջին հարցախույզների, դեմ է Իրանի նկատմամբ թրամփյան քաղաքականությանը եւ Իսրայելի հետ համակարգված (ոմանց կարծիքով՝ վերջինի դրդմամբ) հակաիրանյան պատերազմին, որն իր 2-րդ ամիսը թեւակոխեց երեկ: Այդ պատերազմին դեմ են հատկապես երիտասարդական շրջանակներում, որտեղ, ըստ նույնինքն ամերիկյան դիտորդների, հայտարարում են, որ դա իրենց պատերազմը չէ եւ քննադատության թիրախ են դարձրել իսրայելական լոբբիստական կազմակերպություններին:

Բողոքի ալիքը մակընթացություն արձանագրեց հատկապես մարտի 27-ից սկսած, երբ Պենտագոնը հայտարարեց, որ ընդունել է նախագահ Թրամփի հանձնարարությունը՝ ի հավելումն իր հսկայական արմադայի՝ ցամաքային զորք ուղարկելու իրանյան ուժերի դեմ, առաջին հերթին նպատակ ունենալով գրավել Խարք կղզին, որը համարվում է կարեւորագույն հանգույցը պարսկական նավթագազային արդյունահանման: Ռազմական այդ եւ այլ գործողությունների համար պաշտպանության գերատեսչությունը Սպիտակ տնից պահանջեց աստղաբաշխական՝ 500 մլրդ դոլարի բյուջե, ինչը, սակայն, իմ կարծիքով, դժվար թե Կոնգրեսում երկկուսակցական վավերացման արժանանա, այն էլ՝ միջանկյալ ընտրությունների սեմին: Ախր հարցը միայն հավելյալ ռազմական ծախսերին չի վերաբերում, այլ՝ շատ ավելի զգայուն՝ մարդկային անխուսափելի կորուստներին: Ու թեեւ Դոնալդ Թրամփը շարունակում է ամերիկացիներին ցինիկորեն հիշեցնել, որ Վենեսուելայի մայրաքաղաք Կարակասում նախագահական պալատը գրավելու, նախագահ Մադուրոյին ու նրա տիկնոջը առեւանգելու հատուկ գործողության ժամանակ ամերիկյան զինուժի ոչ մի անդամի քիթն անգամ չարյունեց, սակայն Կոնգրեսի առաջիկա ընտրություններին պատրաստվող ոչ մի թեկնածուի, ինչպես նշում են դիտորդները, այն էլ՝ ներկա գրեթե համաժողովրդային դժգոհության պայմաններում, չի կարելի մոլորեցնել: Ցամաքային պատերազմը միշտ էլ զոհեր է խլում, այն էլ՝ բազմաթիվ զոհեր:

Իսկ եթե այս բոլորի վրա ավելացնենք Մ. Նահանգներում առկա բացասական մյուս իրողությունները՝ համատարած գնաճ, վառելանյութի թանկացում, ուսանողական ակտիվիստների նկատմամբ հալածանք, անօրինական կեցությունների դեմ խստացված պատժամիջոցներ ու դեպորտացիա, մանր ու մեծ սկանդալներ (Էփշտեյնի «գործը» օրինակ), թանգարանների, մշակույթի կենտրոնների փակում, նախագահի անկիրթ պահվածք, խաղաղության, եւ հաշտեցումների անվան տակ անհաշտ, անողոք գործողություններ եւ ամենակարեւորը՝ պետական մարմինների միջեւ հակակշռի կանոնների եւ բազմազանության անտեսում, ինչը հաստատում է Նոբելյան մրցանակի հայազգի դափնեկիր Տարոն Աճեմօղլուի 3 տարի առաջ կատարած գուշակությունը թրամփյան Ամերիկայում ժողովրդավարության անէացման մասին եւ, միաժամանակ, բողոքի ցույցերի գլխավոր կարգախոսի՝ No Kings-ի արդարացիությունը:

Ի դեպ, այդ նույն կարգախոսն ամերիկացիներն օգտագործել են 1787 թ.ին, Սահմանադրության ընդունման օրերին: Նկատի ունենալով Բրիտանական կայսրության միապետի՝ թագավորի միահեծան իշխանության պարտադրումը ամերիկացի ժողովրդի անկախության պայքարի դեմ: Այդ կարգախոսը հիմնարար ու պարտադիր սկզբունք է Մ. Նահանգների Սահմանադրության մեջ:

Թրամփը, փաստորեն, փորձում է ցատկ կատարել այդ սկզբունքի վրայով:

Հույս ունենանք, որ ամերիկացի ժողովուրդը ի վերջո կձերբազատվի թրամփականությունից, միաժամանակ դաս տալով բոլո՛ր թրամփիկներին, ո՛ր երկրում էլ գտնվեն նրանք:

**ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ**

# Ինչ-որ բան է փոխվել

## *Փաշինյան-Պուտին հանդիպումից*

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**




Աշխարհում տարօրինակ բաներ են կատարվում, այնպիսիք, որոնք ինքնին հերքում են ինստիտուցիոնալ-կանոնակարգային փոխհամաձայնությունները, ստորագրություններով հաստատված թղթերն ու պայմանագրերը: Ահավասիկ՝ «Էպիկական կատաղություն» անվանված թրամփյան գործողությունն Իրանում, օրինակ, իշխանափոխության նոր տեսակ է ամրագրում, գունավոր եւ տարատեսակ այլ իշխանափոխությունների շարքում՝ գործող պաշտոնյաներին ֆիզիկապես ոչնչացնելով նոր մարդկանց իշխանության բերելու:

Այդ իմաստով ամեն օր նոր իրողությունների ենք բախվում՝ երեւում է մարդկությունը պետք է առհասարակ մոռանա զարմանալու հատկությունը եւ պատրաստ լինի անընդհատ բախվելու մինչ այժմ անպատկերացնելի շատ բաների հետ: Այնպես որ՝ հայերիս հետ ամեն օր կատարվող զարմանահրաշ բաներն օրիգինալ չեն անգամ, **Փաշինյան-Պուտին** վերջին հանդիպումը վկա, որի հրապարակային բաց մասի քաղաքական անհանգստություններ ընթացքում պարզապես աննախադեպ շատ տնտեսական եւ քաղաքական անհանգստությունների ենթատեքստեր հղեց հայերիս մտածող շերտին:

Տնտեսական մի շարք աննպաստ մեսիջները Պուտինից՝ ԵՄ-ԵԱՏՄ անհամատեղելիության, ատոմային էներգետիկայի ոլորտի համագործակցության եւ այլ ոլորտների մասին թողնելով տնտեսական վերլուծաբաններին, անդրադառնանք այդ հանդիպման մեջ երեւակված քաղաքական բաղադրիչին:

Փաշինյան-Պուտին հանդիպումը, փաստորեն, դարձավ հերթական ապացույցն այն բանի, որ Հայաստանի խորհրդարանական ընտրություններում մրցակցում են ոչ թե սոսկ մեր տեղական քաղաքական ուժերը, այլ աշխարհաքաղաքական միավորները, ինչի մասին միշտ մենք գրել ենք, ինչը երկրի անվտանգության առումով ամենամեծ սպառնալիքն է հայերիս համար, եւ ինչի վտանգը հայ մեծամասնությունը չի ընկալում սովորաբար, բայց գոնե այս անգամ ակնհայտ տեսավ

⇨2

## Գեորգի Գախարիա. «Կա՛մ Հրվ. Կովկասի համար ձեւավորվում է եվրոպական միասնական հեռանկար, կա՛մ հերթական հնարավորությունն ի չիք է դառնում»

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**Գերմանիա**

Ապրիլի 1-ին եւ 2-ին գերմանական մեդիան անդրադարձել է Մոսկվայում **Փաշինյան-Պուտին** ապրիլմեկյան հանդիպմանը՝ վերնագրերում առավելաբար շեշտելով, թե «Պուտինը զգուշացնում, սպառնում է ՀՀ-ին, որ ԵՄ-ին անդամակցությունը հետեւանք կունենա»: Հայաստանյան ԶԼՄ-ներում հրապարակվածը բավարար համարելով, առավել կարեւոր ենք նկատում ապրիլի 1-ին tablemedia- ում հրապարակված «Տարբեր ուղիներ, ընդհանուր ճակատագիր. Վրաստանը, Հայաստանը եւ Հարավային Կովկասը՝ Եվրոպայի փորձաքար» վերնագրով հոդվածը, որի հեղինակը Վրաստանի նախկին՝ մինչեւ 2021 թվականը պաշտոնավարած վարչապետ **Գեորգի Գախարիան** է: «Վրաստանը եւ Հայաստանը դեպի Եվրոպա ընթանում են տարբեր ուղիներով, սակայն ռազմավարական առումով փոխկապակցված են», գրում է Վրաստանի նախկին վարչապետը եւ պահանջում, որ «Եվրոմիությունն այժմ ապահովի տարածաշրջանային կայունությունը եւ հետ մղի Ռուսաստանի ազդեցությունը»: «Վրացական երազանք» կուսակցության նախկին անդամ, այժմ «Հանուն Վրաստանի» կուսակցության հիմնադիր նախագահ Գախարիան, որ 2025-ից ի վեր իր երկրից արտաքսված ապրում է Բեռլինում, գրում է՝ «Հարավային Կովկասը աշխարհաքաղաքական վճռորոշ խաչմերուկում է: ԼՂ հակամարտության ավարտից հետո, Ռուսաստանի տկարացած դիրքը, նրա սխալ հաշվարկած ներխուժումը Ուկրաինա, Եվրոպայի վերանեգրավվածության հետ միասին ստեղծել են տարածաշրջանը վերաձեւավորելու հազվադեպ հնարավորություն: Արդի պատմության մեջ առաջին անգամ թե՛ Վրաստանը, թե՛ Հայաստանն ունեն եվրոպական շոշափելի հեռանկար, թեեւ այն նաեւ խոցելի է:

Սակայն հենց հիմա նրանց ուղիները սկսում են տարանջատվել՝ տարածաշրջանի համար լայնածավալ հետեւանքների հնարավորություն ստեղծելով»: Գախարիան ընդգծում է, որ «տասնամյակներ ի վեր Վրաստանը եղել է եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման առաջատարը, ստորագրել է ասոցացման համաձայնագիր՝ ներառյալ ազատ առեւտրի գոտին, հասել է վիզաների ազատականացման եւ ստացել է ԵՄ անդամության թեկնածուի կարգավիճակ:

⇨6

# «ԱՄՆ-ը դարձել է ապակառուցողական եւ վտանգավոր երկիր»

ԱՄՆ-ը Թրամփի երկրորդ վարչակազմի օրոք դարձել է ապակառուցողական, ագրեսիվ եւ վտանգավոր երկիր, ու Իրանի հետ ողբերգականորեն ապաշնորհ պատերազմը դրա ապացույցն է: Վերջին հաշվով աշխարհի բոլոր երկրները պետք է որոշեն, թե ինչպես կառուցել հարաբերությունները այն Ամերիկայի հետ, որի վարքագիծը գնալով ավելի քմահաճ է դառնում: Այսպես է գրում «Ֆորին փոլիսի» (Foeign Policy) հեղինակավոր ամերիկյան հանդեսը, ավելացնելով, թե առայժմ երկրները պետք է զգուշանան իրենց դեմ ամերիկյան ուժի միտումնավոր կամ պատահական գործադրումից:

Ըստ հոդվածագրի, Միացյալ Նահանգներն այժմ իրեն պահում է որպես գիշատիչ հեգեմոն: Այն օգտագործում է տասնամյակների ընթացքում կուտակված ազդեցության լծակները՝ շահագործելու ե՛ւ դաշնակիցներին, ե՛ւ հակառակորդներին: Այլ երկրների հետ հարաբերություններում այս «շահում-պարտություն» սկզբունքով մոտեցումը ենթադրում է միջազգային ինստիտուտների եւ նորմերի մեծ մասի նկատմամբ խոր հակակրանք, միտումնավոր ոչ-հետեւողական վարքագիծ: Եվ ուրիշ երկրների առաջնորդներին վատ թաքցված արհամարհանքով վերաբերվելու սովորություն՝ ընդսմին նրանցից մեծ մասից պահանջելով հնազանդության եւ հավատարմության նվաստացուցիչ ժեստեր: Տարածաշրջանում եւ աշխարհում Իրանի դեմ պատերազմի հետեւանքների տարածման հետ պարզ է դառնում, որ վարչակազմը կամ չի հասկացել իր գործողությունների ազդեցությունը այլ երկրների վրա, կամ էլ թքած ունի այդ հարցի վրա:

Իսկ երկրի արտաքին քաղաքականությունը, հոդվածի հեղինակի գնահատմամբ, հայտնվել է զարմանալիորեն ոչ հասու մարդկանց ձեռքերում՝ նախագահից մինչեւ ներքեւ: Եվ քանի որ ԱՄՆ քաղաքական մարմինը մնում է խորապես տրոհված, մյուս երկրները ստիպված են հաշվի առնել այն փաստը, որ ճոճանակը պարզապես շարժվելու է մի կողմից մյուսը, մեկ ծայրահեղությունից մեկ ուրիշը: Նման պայմաններում ո՞ր երկիրը կարող է հույսը դնել այն խոստումների վրա, որ Վաշինգտոնը տալիս է հիմա եւ կտա թեկուզ հետո՝ դեմոկրատական կուսակցությունից ընտրվելիք նախագահի օրոք: Նաեւ՝ ի՞նչ անեն նման Ամերիկայի հետ գործակցող այն երկրները, որոնց համար ԱՄՆ-ը միակ գիշատիչը չէ, այլ կան ավելի մոտիկ անմիջական վտանգներ:




Հրապարակման մեջ դիմակայունության առումով կարեւորվում է ինչպես երկրների սեփական ուժերի, այնպես էլ այլ երկրների հետ գործընկերության ծավալումը, դիվանագիտական քայլերի համատեղումը եւ այլն, հաշվի առնելով նաեւ, որ ուժեղ կողմին զիջումները հանգեցնում են նոր պահանջների:

Նշվում է, թե չնայած իրատես գիտնականների մեծ մասը պնդում է, որ հզոր, ագրեսիվ պետությանը «հարելը» ռիսկային է եւ այդ պատճառով էլ հազվադեպ հանդիպող, որոշ երկրներ դա համարում են լավագույն տարբերակ: Հատկապես՝ թույլերն ու խոցելիները, որոնք կարող են եզրակացնել, որ իրենք այլընտրանք չունեն, քան միանալ Միացյալ Նահանգներին ու լավագույնի հույս ունենալ: Իսկ այն երկրները, որոնք ցանկանում են ԱՄՆ-ի աջակցությունն օգտագործել սեփական ռեւիզիոնիստական նպատակներին հասնելու համար, ուրախությամբ կդիմեն դրան:

Իսրայելը, Սաուդյան Արաբիան եւ Պարսից ծոցի փոքր պետությունները նման պատեհապաշտական վարքագծի ակնհայտ օրինակներ են:

Այն պետությունները, որոնք ընտրում են սերտորեն համագործակցելը Միացյալ Նահանգների հետ եւ ցանկանում են օգտագործել ամերիկյան ուժը իրենց ազգային նպատակներին հասնելու համար, կկրկնապատկեն ջանքերը՝ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն իրենց ցանկալի հուն ուղղելու համար, այնուհետեւ ասվում է հոդվածում: **Նաթանյահուն** եւ կարեւոր որոշ իսրայելական լոբբիստական խմբեր օգնել են համոզել **Թրամփին**՝ սկսել ներկայիս պատերազմը: Ըստ որոշ տեղեկությունների, Սաուդյան Արաբիայի թագաժառանգ **Մուհամեդ բին Սալմանը** Թրամփին դրդում է ցամաքային զորքեր մտցնելու: Կարելի է վստահորեն ասել, որ Իսրայելը եւ Պարսից ծոցի երկրները կշարունակեն լոբբինգ անել Սպիտակ տանը եւ Կոնգրեսում՝ ապահովելու համար, որ զենքի հոսքը չդադարի:

Կոշտ ուժը մնում է համաշխարհային քաղաքականության հիմնական արժույթը, մասնավորապես նշվում է ծավալուն հոդվածում: Միացյալ Նահանգներն այլեւս նման չէ բարեմիտ, թեկուզ եւ ոչ անմեղ, համաշխարհային տերության: Այն այժմ անտարբեր, դաժան եւ մշտապես խաբող կերպարով երկիր է, որը մտահոգված է միայն իր սեփական շահերով: Այդ պատճառով նույնիսկ երկրների այն ղեկավարները, որոնք ցանկանում են գործեր առաջ տանել Վաշինգտոնի հետ, զգուշանալու են չափից ավելի մոտիկությունից:

Գ. Մ.

# Ինչ-որ բան է փոխվել

➩1 Բազմաթիվ կարեւոր եւ օրակարգային տնտեսական հարցերը թողած՝ ՌԴ նախագահն իր փոքրիկ խոսքում հարկ համարեց Հայաստանում հնարավոր նախընտրական սրացումներից խոսել ու հույս հայտնել, որ դրանք չեն խանգարի Ռուսաստանի եւ Հայաստանի հարաբերություններին, պրոռուսական քաղաքական ուժերին տեր կանգնեց, թե բա՝ մենք շատ կուզեինք, որ այդ քաղաքական կուսակցությունները կարողանային մասնակցություն ունենալ ներքաղական աշխատանքում՝Հայաստանի ընտրություններին, նրանցից անազատության մեջ գտնվողներից-ՌԴ անձնագիր ունեցողներից խոսեց, ցանկություն հայտնելով, որ նրանք մասնակցություն ունենան ներքաղաքական աշխատանքում:

Այ քեզ բա՛ն, սա ի՞նչ էր, հո ժամանակային տուրբուլենտություն չէ՞ր այդ պահին՝ մի պահ մեզ Խորհրդային Միություն հետ տարած, երբ ՍՍՀՄ ղեկավարը հանրապետություններից մեկի ղեկավարին բան է հասկացնում: Բայց համ էլ Պուտինը հավաստացրեց, որ ինչ էլ պատահի՝ ՌԴ-ն հայ ժողովրդի շահերից է ելնելու, ոնց էլ ավարտվեն ընտրությունները՝ հայ ռուսական համագործակցության կառուցումը կշարունակվի:

Չեք պատկերացնի անկախ երկրի քաղաքացի որպես՝ ապրածս վիրավորանքի չափը, ո՞նց կարող է այլ՝ թեկուզ գերտերության, թեկուզ երեւութապես գոնե բարեկամ երկրի ղեկավարն այդպես, առանց ձեւականությունների, խառնվել իմ երկրի ներքին կյանքին:



Ու թեեւ Փաշինյանն ի պատասխան ասում էր, որ Հայաստանի ընտրություններին կարող են մասնակցել բացառապես հայկական անձնագիր ունեցող քաղաքացիներ, ռուսական անձնագիր ունեցողները, համաձայն Հայաստանի Սահմանադրության, չեն կարող լինել ոչ պատգամավորության թեկնածու, ոչ վարչապետի թեկնածու, նստվածքը մնաց: Նույնիսկ երբ մեկ օր հետո կառավարության նիստին Փաշինյանը մեղմում էր Պուտինի խոսքի տպավորությունը, թե նա կարող է իրազեկված չլինել Հայաստանի ներքին իրողություններից՝ այդ տեսակետը հայտնելիս, այն է՝ որ ՌԴ քաղաքացին չի կարող Հայաստանում առաջադրվել: Է, որեւէ երկրի ղեկավար ինչպե՞ս պետք է չիմանա պետությունների դասագրքային սահմանումները, որոնք առաջին հերթին ելնում են նրա ներքին գործերին չխառնվելու ընդհանրական, համընդհանուր կանոնից, սա ի՞նչ կասակ է: Էլ չասած, որ ավելի ուշ հետեւեցին ՌԴ փոխվարչապետ **Ալեքսեյ Օվերչուկի** մի շարք բարձրաձայնումներ, որոնք թաքնված սպառնալիքի ենթատեքստեր ունեն տնտեսական մակարդակում, որպես ամրագրում քաղաքական ուղերձների:

Ի՞նչ կարելի է ասել այս բոլորի մասին:

Մենք խոստացել էինք պահի նախընտրական վերլուծություն: Բայց դա կարծես թե հիմա, այս պահին հարիր չէ, քանի որ պահի օրակարգը պետք է լինի վերագնահատումը: Մեր քաղաքական ուժերը գոնե այս առիթով պետք է հասկանան, թե ինչ աստիճանի խոցելի են դարձրել մեր ներքին կյանքը՝ իշխանությունից սկսած, իրենց ընդդիմություն համարողներով վերջացրած, երբ մի երկրի ղեկավար 2 մլն հայ քաղաքացիների փաստն է օգտագործում՝փորձելով ազդեցություն ունենալ մեր ընտրությունների վրա, մի ուրիշը նույն կերպ 1,5 մլն հայ քաղաքացիներին կարող է մատնացույց անել՝ նույն նպատակով, երրորդը՝ կես միլիոն, ու այդպես բոլոր մեծ խաղացողները կուզենան (եւ ուզում են) ազդեցության իրենց բաժինը մեր ներքին կյանքում՝ իրենց շահերի արտացոլմամբ:

Մեր քաղաքական ուժերն, ուրիշների շահերի մեջ ընկղմվելիս, երեւի մոռացել են, որ Հայաստանը պետություն է, անկախ պետություն, Հայաստանի ժողովուրդն է պետության տերը եւ բոլոր «ազդվածներին» կարող է գրողի ծոցն ուղարկել՝ առաջին հերթին ընտրության չգնալով:

Երբ ստեղծվում էր նոր, Պուտինի ասած՝ պրոռուսական ուժը, համոզված ենք, որ Հայաստանում դա չէր կարող կատարվել առանց իշխանության իմացության, լուռ կամ գործուն՝ կարեւոր չէ: Այդպես եղել է առաջ, այդպես է հիմա, միշտ ուժային կառույցների ակնդետ հայացքի ներքո են այդպիսի ուժեր ստեղծվել: Այս անգամ՝իշխանություն-ընդդիմություն խորհրդարանական ներկայության՝ 60-40 տոկոսանոց տեսլականի քարտեզը որպես նշանակետ: ՀՀԿ-ի հրաժարումը ընտրություններին մասնակցությունից հենց նշանակում է այդ քարտեզի ուրվագծի գիտակցում: Ամբողջ խնդիրն այն է, որ ինչ-որ պահի 60-ի եւ 40-ի փոխատեղումը՝ արտաքին կազմակերպմամբ հնարավոր է փաստորեն մի երկրում, որի գործերին արտաքին խաղացողները չեն խորշում միջամտել:

Այնպես որ պետք է սպասել դեռ ընտրություններին մասնակցելու հայտերի գրանցմանը՝ ճշգրիտ պատկեր ներկայացնելու համար, քանի որ ինչ-որ բան, այնուամենայնիվ, փոխվել է հավանաբար նաեւ մեր ներքին կյանքում, ու անկանխատեսելի զարգացումներ հնարավոր են՝ նաեւ կուսակցությունների այս կամ այն հայտը չգրանցելու առումով:

Էլ չասած, որ մեր ընտրությունների քարտեզն ուղիղ համեմատական է տարածաշրջանային աշխարհաքաղաքական լուծումներին, դրանց ուշացումը նույնիսկ մեր ընտրությունների ուշացում կարող է նշանակել:

Իսկ մեր քաղաքական ուժերին կոչ կանեինք նորից վերլուծել իրենց վարքագիծն ու նախագծումները՝ Հայաստանը արտաքին բախումների կիզակետ չդարձնելու առումով:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

# Իրանի դեմ պատերազմի պատճառով կբախվե՞ն Բաքվի եւ Անկարայի շահերը



Խորհրդային Միության փլուզումից հետո ձեւավորված Ադրբեջանի Հանրապետությունը 1990-ականների սկզբին, Թուրքիայի հետ սերտ հարաբերություններ հաստատելու ակնկալիքով, շրջանառության մեջ դրեց «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը: Սակայն երկու երկրների միջեւ հարաբերությունները ժամանակ առ ժամանակ վատթարացման միտում էին արձանագրում:

Բաքու-Անկարա հակամարտությունը կարծես ավելի լուրջ բնույթ ստացավ հատկապես 2026 թվականի մարտի սկզբից մինչ օրս շարունակվող` Իրանի դեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի հրահրած պատերազմի օրերին: Պատճառն այն է, որ, ի տարբերություն ադրբեջանական կողմի, Թուրքիան շահագրգռված է հակամարտության արագ կարգավորմամբ եւ այդ ուղղությամբ քայլեր է ձեռնարկում:

Թուրքիան եւ Ադրբեջանը, թեեւ համաձայնության են եկել ընդունել միմյանց չհակասող արտաքին քաղաքական դիրքորոշումներ, այնուամենայնիվ Իսրայելի հարցում հաճախ ունենում են տարբեր մոտեցումներ: Չնայած երկուսն էլ ճանաչում են Պաղեստինը որպես պետություն, սակայն Ադրբեջանը սերտ կապեր ունի Իսրայելի հետ եւ 44-օրյա պատերազմի ընթացքում գնել է, ինչպես նաեւ մինչ օրս շարունակում է գնել Իսրայելից մեծ քանակությամբ սպառազինություն:

Իսրայելը նաեւ Ադրբեջանի նավթի խոշորագույն գնորդներից է: Սակայն ադրբեջանական SOCAR ընկերությունը հայտարարել է, որ ինքը ուղղակիորեն նավթ չի վաճառում Իսրայելին եւ չի միջամտում այն ընկերությունների որոշումներին, որոնք դա անում են:

ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացվող ագրեսիայի հետեւանքով, ըստ միջազգային դիտորդների, ավելի ակնհայտ են դառնում Անկարայի եւ Բաքվի միջեւ առկա տարաձայնություններն ու հակասությունները:

Baku Research Institute հետազոտական ինստիտուտի կայքում հրապարակված հոդվածում անդրադարձ է կատարվում Բաքու-Անկարա հարաբերություններում ժամանակ առ ժամանակ ի հայտ եկող տարաձայնություններին:

Մասնավորապես նշվում է, որ 1995 թվականին Ադրբեջանը մեղադրել է թուրքական անվտանգության ծառայությունների հետ ենթադրաբար կապ ունեցող որոշ թուրք քաղաքացիների` նախագահ **Հեյդար Ալիեւի** դեմ ձախողված հեղաշրջմանն աջակցելու մեջ:

Նույն աղբյուրի համաձայն. 2008 թվականին Բաքվի եւ Անկարայի միջեւ լարվածությունը կրկին սրվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար նախաձեռնված «ֆուտբոլային դիվանագիտության» շրջանակում, երբ, ըստ Ադրբեջանի, հաշվի չէր առնվել Լեռնային Ղարաբաղի հարցում Բաքվի դիրքորոշումը:

Բաքու-Անկարա լարվածությունը կրկին սրվեց նաեւ այն ժամանակ, երբ Թուրքիայի նախագահ **Էրդողանն** իր ելույթներում ընդգծեց Թուրքիայի վճռորոշ դերը 44-օրյա պատերազմում` Ադրբեջանի հաղթանակում հայկական կողմի նկատմամբ:

Bloomberg-ի տվյալներով, Անկարան ճնշում է գործադրում Արաբական ծոցի երկրների վրա` հրապարակավ եւ պաշտոնապես ձեռնպահ մնալու Իրանի դեմ ագրեսիային մասնակցելուց:

Անկասկած, Անկարայի եւ Բաքվի միջեւ առկա լարվածությունն արտացոլում է Թուրքիայի դաշնակիցների տեսակետների տարբերությունները տարածաշրջանային սպառնալիքների եւ զարգացումների վերաբերյալ, մասնավորապես` Իսրայելի եւ Իրանի հարցերում:

Որոշ փորձագետներ կարծում են, որ ներկայիս միտումները կարող են թուլացնել Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ սերտ կապերը եւ հնարավորություն ընձեռել Ռուսաստանին` ամրապնդելու իր ազդեցությունը Հարավային Կովկասում: Սակայն, մեր կարծիքով, նման ենթադրությունների համար առկա փաստերը բավարար չեն:

Հիշեցնենք, որ 2026 թվականի մարտի 4-ին Իրանի առաջնորդ **Ալի Խամենեիի** սպանության առիթով ցավակցություն հայտնելու համար նախագահ **Իլհամ Ալիեւը**, ինչպես ինքն է նշել, տարածաշրջանի երկրներից միակն էր, որ պետության ղեկավարի մակարդակով այցելեց Բաքվում Իրանի դեսպանատուն: Ըստ ամենայնի, նախագահ **Ալիեւը** փորձում էր խուսափել հակամարտության մեջ ներգրավվելուց:

Սակայն արդեն հաջորդ օրը Իրանը, ենթադրաբար, անօդաչու թռչող սարքերով հարձակում իրականացրեց Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության վրա` վիրավորելով մի քանի մարդու: Ի պատասխան` Ալիեւը հանդես եկավ կոշտ եւ սպառնալից ելույթով` կտրուկ մեղադրելով Իրանին, ինչից հետո թուրքական լրատվամիջոցները շտապեցին արձագանքել նրա հայտարարություններին:

Ադրբեջանի իշխանություններին հավատարիմ Միլլի Մեջլիսի պատգամավորները մեղադրեցին Էրդողանի մերձավոր շրջապատի հետ կապ ունեցող լրատվամիջոցներին` Ալիեւի դեմ մեդիաարշավ կազմակերպելու մեջ:

Ալիեւին ուղղված քննադատությունները բազմաբնույթ էին. երբեմն խոսվում էր Բաքու-Թել Ավիվ սերտ կապերի բացահայտման մասին, երբեմն էլ մատնանշվում էր Ադրբեջանի կառավարման ավտորիտար բնույթը:

Ընդ որում` թե՛ Ադրբեջանի իշխանությունները, թե՛ ընդդիմադիր գործիչները անօդաչու թռչող սարքերի հարվածը օգտագործեցին Իրանի հյուսիսային` ազերիաբնակ նահանգների ուղղությամբ անջատողական հռետորաբանությանը նոր շունչ հաղորդելու համար:

Այս թեմային կրկին անդրադառնում է Baku Research Institute-ի կայքում հրապարակված հոդվածը` նշելով, որ ԻԻՀ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսին մոտ կանգնած աղբյուրների, ինչպես նաեւ մի շարք հեղինակավոր լրատվամիջոցների վերլուծությունները ցույց են տալիս, որ Իրանը պաշտոնապես հերքում է անօդաչու թռչող սարքերի կիրառումը: Ավելին, իրանական կողմը ներկայացնում է ապացույցներ տարբեր ծագում ունեցող անօդաչու թռչող սարքերի տեխնիկական նմանության վերաբերյալ, ինչը պարարտ հող է ստեղծում տարբեր մանիպուլյացիաների համար:

Այնուամենայնիվ, կարելի է վստահորեն ասել, որ Բաքվի եւ Անկարայի միջեւ ժամանակ առ ժամանակ սրվող հարաբերությունները, հաշվի առնելով երկու երկրների ռազմաքաղաքական հեռանկարային շահերի ընդհանրությունը, երբեք լուրջ հակամարտության չեն վերածվի, իսկ Թուրքիայի իշխանությունների նկատմամբ Ալիեւի դժգոհությունները կրում են անցողիկ բնույթ:

# Ռուսական հայացք Հայաստանի ատոմային էներգետիկայի ապագային եւ «Թրամփի ուղուն»

ՌԴ փոխվարչապետ **Ալեքսեյ Օվերչուկը** հայտարարել է, թե Հայաստանը կարող է էներգիայի պակասուրդի առաջ կանգնել, եթե մինչեւ տարեվերջ նոր ատոմակայանի կառուցման վերաբերյալ որոշում չկայացվի: Այս մասին հաղորդում է մասնավորապես «Ցարգրադ» ռուսական հեռուստաալիքը: Վերջինիս տեղեկացմամբ, դեկտեմբերի վերջին «Ռոսատոմ» ռուսական պետական միավորումը Հայաստանին ներկայացրել է հանրապետությունում նոր էներգաբլոկի կառուցման վերաբերյալ մանրամասն մշակված առաջարկների շարք: «Ռուսաստանը պատրաստ է Հայաստանին ներկայացնել երկրում ատոմային էներգետիկայի զարգացման ամենաբարենպաստ առաջարկներ»,- «ՌԻԱ Նովոստի»-ին տված հարցազրույցում հայտարարել է «Ռոսատոմի» ղեկավար **Ալեքսեյ Լիխաչովը**:



ՏԱՍՍ լրատուն էլ հիշեցնում է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար **Դավիթ Խուդաթյանի** փետրվարի 3-ի հայտարարությունը` Մեծամորի գործող կայանին փոխարինելիք ապագա ատոմակայանի մոդուլային տարբերակի (հիշենք` ԱՄՆ-ի հետ) Հայաստանի որոշման մասին: Միաժամանակ նշվում է, թե ՀՀ կառավարությունը 65 միլիոն դոլար է հատկացրել ներկա ատոմակայանի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետը մինչեւ 2036 թվականը երկարաձգելու ծրագրի համար, իսկ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** փետրվարի 11-ին հայտարարել է, որ Մեծամորի ատոմակայանի շահագործումը կարող է երկարաձգվել մինչեւ 2046 թվականը:

Ռուսաստանի փոխվարչապետը, անդրադառնալով նաեւ Հայաստանի արտաքին-տնտեսական հարաբերություններին, իր գնահատականն է հայտնել Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի հետաքրքրվածության վերաբերյալ: ՏԱՍՍ լրատվականի հետ զրույցում նա հայտարարել է, թե ԱՄՆ-ին հարկավոր է միջանցք Հայաստանի միջով` Կենտրոնական Ասիայից կրիտիկական հանքանյութեր արտահանելու, ինչպես նաեւ Իրանը վերահսկելու համար:

«Վաշինգտոնի համար «Թրամփի երթուղին» միջազգային տրանսպորտային միջանցք է, որն ապահովելու է կարեւորագույն հանքանյութերի արտահանումը Կենտրոնական Ասիայից ԱՄՆ, ինչպես նաեւ Իրանի հյուսիսային սահմանի վերահսկողությունը»,- ընդգծել է Օվերչուկը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

**ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ**

# Նիկոլ Բալիվիան. Ներգաղթյալների ձայների նկարահանումը

*ԵՐԵՎԱՆ-ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ - Ամերիկյան սցենարիստ եւ ռեժիսոր **Նիկոլ Բալիվիանը** ծնունդով Վաշինգտոնից է: Ուսանել է Ամերիկյան համալսարանի Կինոյի եւ մեդիաարվեստների բաժնում, համագործակցել «Ուորնըր բրադերս» հեռուստաընկերության, «Յունիվերսալ փիքչըրս» կինոստուդիայի եւ անկախ կինոնախագծերի հետ: Նրա «Յեմմա» սցենարը 2022 թվականին «Բլյու քաթ» սցենարական մրցույթում արժանացել է մրցանակի, իսկ «Քնելով քարերի վրա» սցենարն ընտրվել է հեղինակավոր «Սանդանսի սցենարական լաբորատորիա» ծրագրի համար: Գրել եւ բեմադրել է «Ջոն եւ շալը» կատակերգական կարճամետրաժ ֆիլմը, որը 2021-ին Նյու Յորքի «Կանայք կինոյում եւ հեռատեսիլում» մրցույթում շահել է գլխավոր, իսկ 2020-ին «ՎՈՔՍ» կանանց փառատոնում՝ հանդիսատեսի մրցանակը:*

*Նիկոլ Բալիվիանի առաջին լիամետրաժ ֆիլմը՝ «Ուղեւորություն Զիգզիգլանդը» (2007), նկարահանված Լոս Անջելեսում եւ Պաղեստինում, արժանացել է բազմաթիվ միջազգային փառատոների մրցանակների:*



**-Սիրելի՛ Նիկոլ, հիշում եմ ձեր «Ուղեւորություն Զիգզիգլանդը», որը ցուցադրվեց մեր «Ոսկե ծիրան» փառատոնում: Ինձ շատ տպավորեցին ֆիլմի հումորը եւ գլխավոր հերոսը՝ պաղեստինցի տաքսիստը, որի ճակատագիրն անտարբեր չի թողնում: Ձեր ստեղծագործություններն ընդգրկում են կատակերգություն, դրամա եւ միջազգային միջավայրեր: Ինչպե՞ս են ձեր անձնական փորձառությունն ու մշակութային նախապատմությունն ազդում ձեր ընտրած պատմությունների վրա:**

-«Զիգզիգլանդը» գրելիս օգտվել եմ ոչ միայն իմ անձնական փորձառությունից: Միացյալ Նահանգներում ներգաղթյալի փորձառության մեջ այնքա՜ն շատ անհեթեթություններ կան: Ես մեծացել եմ Վաշինգտոնում՝ շրջապատված մարդկանցով, որոնց ծնողները ներգաղթյալներ էին: Յուրաքանչյուր ընտանիք ուներ հարմարվելու իր պատմությունը՝ լի հումորով, ցավով, զոհաբերությամբ եւ ընտանիքի հանդեպ սիրով: Շատ բաներ, բնականաբար, համընդհանուր են: Օրինակ, հիմա աշխատում եմ «Ուղեբեռ» վերնագրով սցենարի վրա, որը վերաբերում է տարբեր մարդկանց՝ Ամերիկայից իրենց հայրենիք տանող ուղեբեռների հետ կապված պատմություններին: Այստեղ ապրող բոլոր ներգաղթյալները, վերադառնալով տուն, ստիպված են մի լրացուցիչ ճամպրուկ վերցնել՝ նվերներով, դեղերով, ծխախոտով՝ ազգականների, ընկերների եւ ինչ-որ մեկի հորեղբոր համար, որն ապրում է երկու գյուղ հեռու: Բոլորի պատմությունը նույնն է, պարզապես նույն ծիծաղելիությունը՝ տարբեր լեզուներով:

**-Թեեւ դուք ծնվել եք Միացյալ Նահանգներում, ձեր ստեղծագործության մեջ կենտրոնական տեղ են զբաղեցնում Մերձավոր Արեւելքի թեմաները: Ձեր կերպարները հաճախ հրեաներ եւ պաղեստինցիներ են, որոնց հակամարտությունը կարծես հավերժական է: Ինչպե՞ս են արձագանքել այդ համայնքները ձեր ֆիլմերին, եւ, ըստ ձեզ, ձեր ստեղծագործությունը կարո՞ղ է առողջ երկխոսություն խթանել նրանց միջեւ:**

-Տարիների ընթացքում հանդիսատեսից ընդհանուր առմամբ դրական արձագանք եմ ստացել: Իրականում միայն մեկ անգամ եմ դիմադրության հանդիպել՝ «Զիգզիգլանդի» հարց ու պատասխանի ժամանակ Սանտա Բարբարայի կինոփառատոնում, երբ մի հանդիսատես ակնարկեց, թե իբր ես հակահրեա եմ: Կատակերգությունը հրաշալի միջոց է՝ փոխանցելու այնպիսի գաղափարներ, որոնց մասին դժվար է խոսել, ինչպիսիք են, օրինակ, քաղաքական հարցերը: Ծիծաղի միջոցով կարող ենք ամեն ինչին այլ տեսանկյունից նայել: Կարող ենք ազատորեն մարտահրավեր նետել ընդունված կարգին: Ի վերջո, ոչինչ չի համեմատվի այն պահի հետ, երբ լսում ես հանդիսատեսի ծիծաղը՝ չիմանալով նրանց ինքնությունը:

**-Ձեր ֆիլմերն ուսումնասիրում են ինքնության եւ արտագաղթի խնդիրները: Այսօրվա Ամերիկայում ներգաղթի հարցերը նոր փուլ են մտել՝ ավելի խիստ քաղաքականության պատճառով: Կարո՞ղ է այս իրավիճակը նոր պատմությունների աղբյուր դառնալ, նույնիսկ եթե դժվար լինի դրանք հումորով ներկայացնելը:**

-Այն, ինչ տեղի է ունենում ԱՄՆ-ում Ներգաղթի եւ մաքսային ծառայության հետ կապված, արագ անկում ապրող կայսրության ախտանիշ է: Նմանատիպ ֆաշիզմի սարսափները նույնիսկ ամերիկացիները դեռ լիովին չեն գիտակցում: Ոչ միայն բացահայտ սպանություններ են տեղի ունեցել, այլեւ որոշ երեխաներ փախստականների ճամբարներում բուժօգնության կարիք ունեն: Ես չափազանց ցնցված եմ, որպեսզի նույնիսկ կարողանամ ամբողջությամբ ընկալել այս լուրերը:

**-Լինելով «Չորրորդ մշակույթի երեխա»*՝ ինչպե՞ս է տարբեր մշակույթների մեջ մեծանալը ձեւավորել այն պատմությունները, որոնք ցանկանում եք պատմել:**

-Այո՛, Ամերիկա ներգաղթած մարդու երեխան յուրացնում է ծնողների հայրենի մշակույթը, հետո՝ ամերիկյանը, եւ արդյունքում ապրում է դրանց խառնուրդով: Այս խառն ինքնության շնորհիվ ես շատ ընդհանրություններ ունեմ իմ ընկերների մեծ մասի հետ, որոնց ծնողները նույնպես ներգաղթյալներ են եւ դրա մեջ մենք ճանաչում ենք միմյանց՝ ընդհանուր բաներ գտնելով մեր ծնողների մշակույթների միջեւ: Այդ պատճառով ես հաճախ ավելի լավ հասկանում եմ որեւէ մշակույթ, որին իրականում չեմ պատկանում, քան այն սովորական ամերիկացին, որի նախնիներն Ամերիկա են եկել 1620 թվականին, «Մեյֆլաուըր» նավով:

**-«Բալիվիան» ազգանունը հայկական չի հնչում: Կարո՞ղ եք պատմել ձեր նախնիների մասին:**

-Հետաքրքրական է, որ, ըստ ձեզ, այն հայկական չի հնչում, որովհետեւ ինձ ամբողջ կյանքում հակառակն են ասել: Մեր ընտանիքում կան մի քանի սիրող ծագումնաբաններ, որոնք փորձում են գտնել մեր ճշգրիտ հայկական արմատները: Նրանք պարզել են, որ մեր նախնիները պետք է տեղափոխված լինեն Իսպանիա մոտավորապես 18-րդ դարում, որտեղից էլ մեկնել են Հարավային Ամերիկա:

**-Ըստ Վարդան Մատթեոսյանի, որն ուսումնասիրել է Իտալիայի եւ Լատինական Ամերիկայի հայերի պատմությունը, Բալիվիանների տոհմն Իտալիայում գոյություն է ունեցել մոտավորապես 9-րդ դարից, ունի բասկյան ծագում, եւ Բոլիվիայի Բալիվիանները ծագում են այնտեղից: Նրանց տոհմածառի ուսումնասիրությունը հայկական որեւէ հեռավոր հետք ցույց չի տալիս: Այնուամենայնիվ, ունե՞ք կապեր հայ մշակույթի եւ արվեստագետների հետ:**

-Իհարկե, ես ընկերություն եմ անում Լոս Անջելեսում ապրող մի շարք հայ կինոգործիչների եւ երաժիշտների հետ: Այստեղ է հայկական ամենաբազմամարդ համայնքներից մեկը: Այստեղի հայերը պնդում են, որ ես հայ եմ: Մի անգամ «Սաքս ֆիֆթ ավենյու» խանութում աշխատող մի կին ինձ պատմեց, թե որտեղից է իմ ընտանիքը (այժմ Թուրքիայում գտնվող մի հին գյուղից) եւ ասաց, որ իբր կա իմ ազգանվամբ գիտական մի ինստիտուտ: Իսկ երբ առաջին անգամ հանդիպեցի մեր մալուխներ տեղադրող հային, ու նա իր այցեքարտը տվեց ինձ, երկուսով սկսեցինք ծիծաղել: Նրա անունազգանունը «Nigol Balivian» էր:

**-Իսկապես զվարճալի է... Հնարավո՞ր է, որ մի օր հայկական թեմայով որեւէ նախագիծ իրականացնեք:**

-Ես մեծ հաճույքով հայկական որեւէ նախագծի համարտադրող կլինեմ, եթե դրա համար լավ հնարավորություն ստեղծվի:

**-Իսկ այժմ ինչի՞ վրա եք աշխատում: Դարձյալ կապ կա՞ Մերձավոր Արեւելքի հետ:**

-Այս տարին ավարտում եմ մի կարճամետրաժ ֆիլմի ֆինանսավորման ապահովման գործընթացը: Այն տեսողական է դարձնում ազատ Պաղեստինի գաղափարը: Ֆիլմը կոչվում է «Կանչը» եւ ներկայացնում է այն պահը, երբ մենք հեռախոսազանգ ենք ստանում եւ տեղեկանում, որ Պաղեստինն ազատագրվել է: Մենք ուզում ենք փոխել պատմության ներկայացման ձեւը: Ուզում ենք ներմուծել նոր, կենսուրախ զգացում, ինչը մեզ կօգնի հաղթահարել մահն ու ավերածությունը: Քանի որ գիտենք, որ ապագան պատկանում է ազատությանը՝ անկախ այն բանից, թե այսօր ով է դրան խոչընդոտում...

** «Չորրորդ մշակույթի զավակ» անվանում են այն մարդկանց, որոնք մանկության ընթացքում մեծանում են մի քանի մշակույթների ազդեցության ներքո՝ արդյունքում ձեւավորելով մի առանձին, խառը ինքնություն, որը լիովին չի համընկնում ո՛չ ծնողների, ո՛չ իրենց բնակած երկրի մշակույթի հետ:*

# Րաֆֆի Եդալյանի ինստալացիան Մալթայի բիենալեում



Մարտի 11-ին մեկնարկել է Մալթայի բիենալեի երկրորդ թողարկումը՝ միավորելով ավելի քան 130 միջազգային եւ մալթացի արվեստագետների «CLEAN-CLEAR-CUT» թեմայով: Միջոցառումը նախաձեռնել է «Մալթայի ժառանգությունը»՝ Վալետտայի, Վիտտորիոսայի եւ Գոցոյի 11 պատմական հուշարձաններում ու թանգարաններում: Այն գործելու է մինչեւ մայիսի 29-ը:

Հայաստանի տաղավարը ներկայացնում է **Րաֆֆի Եդալյանի «Ձայնը, որ երբեք չի տեսնվել»** քանդակային եւ ձայնային ինստալացիան (կուրատոր՝ **Սոնա Հովհաննիսյան**): Այն այցելուներին հրավիրում է մտնել խորհրդածական հայկական մի միջավայր, որը ձեւավորվել է լռության, հիշողության եւ անտեսանելի ջրի կաթիլի դժվար որսալի ռիթմի շուրջ: Տաղավարն արտացոլում է Հայաստանի դիմադրության պատմությունները եւ պարտադրված լռությունը՝ առաջարկելով մի տարածք, որտեղ փխրունությունը վերածվում է տոկունության, իսկ լռությունը՝ վկայության: Մալթայի ջրի հետ ունեցած հարաբերության հետ երկխոսության մեջ ցուցադրությունը կոչ է անում այցելուներին լսել այլ կերպ՝ զգալ, թե ինչպես թաքնվածը, լռեցվածը կամ երբեք չտեսնվածը կարող է հնչել խորին հստակությամբ:

Րաֆֆի Եդալյանը (ծն. 1973, Բեյրութ) ֆիգուրատիվ նկարիչ եւ քանդակագործ է: Ավարտել է Լիբանանի Գեղարվեստի ակադեմիան՝ փորագրության մասնագիտությամբ, ապա ուսանել է կերպարվեստ Թորոս Ռոսլինի անվան Գեղարվեստի ակադեմիայում: 2012 թվականին նրա Հակոբ Մեղապարտի հուշարձանի մանրակերտը ներառվել է Հռոմի պապ Բենեդիկտոս XVI-ի հավաքածուում՝ Վատիկանում: 2015-ին Եդալյանը Սուրբ Պետրոսի տաճարում Հռոմի պապ Ֆրանցիսկոսին է նվիրել կաթոլիկ եկեղեցու սուրբ Իգնատիոս Երանելի Մալոյանի իր գեղանկարը, որը հետագայում հրատարակվել եւ թողարկվել է Վատիկանի ֆիլատելիստական եւ դրամագիտական վարչության կողմից՝ սահմանափակ տպաքանակով նամականիշի տեսքով: Նույն թվականին նրա «Երախտագիտություն» հուշարձանը տեղադրվել է Բեյրութի Ժըմմայզե թաղամասում, իսկ 2017-ին քանդակել է Ֆաթիմայի Տիրամոր ջահը, որը Լիբանանի կաթոլիկ եկեղեցին նվիրաբերել է Պորտուգալիայի Ֆաթիմայի սրբավայրին:

Հայաստանի մասնակցությունը Մալթայի բիենալեին նախաձեռնել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը՝ Իտալիայում Հայաստանի դեսպանության աջակցությամբ:

Ա. Բ.

# Թրամփը եւ Արվեստների Քենեդի կենտրոնը

**Պրոֆ. ՓԻԹԵՐ ԲԱԼԱՔՅԱՆ**



Արվեստների Քենեդի կենտրոնը վերահսկելու նախագահ Թրամփի ջանքերի արդյունքը ակնկալելի էր, բայց այժմ մեծ թվով երաժիշտների համերգ տալուց կամ իրենց զբաղեցրած պաշտոններից հրաժարվելու հետեւանքով նա որոշել է երկու տարի ժամկետով փակել այդ հաստատությունը՝ իբր վերանորոգման պատրվակով: Վերջին հրաժարական տվողը Ազգային Սիմֆոնիկ նվագախմբի (ԱՄՆ) գործադիր տնօրեն **Ջին Դավիթսոնն** էր, որն «արտաքին ուժերի» միջամտությունը չէր կարողացել մարսել: Նրանից առաջ **Ֆիլիպ Գլասն** էր հրաժարվել, որ ԱՄՆ-ն կատարեր իր N15 սիմֆոնիան՝ որպես բողոքի նշան կենտրոնի վարչության անդամների նկատմամբ Թրամփի ձեռնարկած քաղաքական զտումների եւ կենտրոնի ճակատին իր անունը հավերժացնելու անօրինական (առանց կոնգրեսի համաձայնության) քայլի համար: Նա հստակ ձեւակերպել է, որ կենտրոնի նկատմամբ ներկայիս պարտադրված ոտնձգությունները ուղիղ հակասության մեջ են գտնվում իր սիմֆոնիայի դավանած արժեքների հետ, որոնք գովերգում, փառաբանում են Լինկոլնի բարեփոխումները՝ կապված «առողջ դատողության, արդարամտության, խտրականությունների վերացման եւ օրենքի գերակայությանը հավատարիմ մնալու պարտավորությունների հետ: Թրամփի գործողությունները շփոթմունք են առաջացրել եւ ծաղրանքի առարկա դարձել: Նրա վարչակազմի վայրագությունները ու անտրամաբանական քայլերը զայրացնում են կատարողական արվեստի սիրահարներին: Պաշտոնյաների, արվեստագետների եւ մանավանդ Ազգային Օպերայի ընկերակցության զանգվածային հրաժարականները հստակ ուղերձ են պարունակում այն մասին, որ անհրաժեշտ է պահպանել ամերիկյան մշակույթի էթնիկական առանձնահատկությունները: «Այդ հաստատությունը այսուհետ «Արվեստների Դ. Թրամփ եւ Ջ. Ֆ. Քենեդի կենտրոն» նոր անվանումով չի կարող ողջունելի վայր համարվել նրա հիմնադիր անդամների որդեգրած առաքելության, մեր դավանած արժեքների եւ արվեստագետների ազատ գործունեության ու ստեղծողության համար», սա է հիմնական կողմնորոշումը արվեստագետների: Նրանք հիշեցնում են, որ Քենեդի կենտրոնն իր բացման օրվանից (1971-ին) սկսած ամերիկյան մշակույթի կարեւորագույն եւ հզորագույն կառույցներից մեկն է եղել, անքակտելի մասնիկը բազմամշակույթ ավանդույթների եւ վերլուծական ստեղծողության: Անցած 55 տարիների ընթացքում ամերիկյան մշակութային կյանքը բնորոշող արվեստագետների մեծ քարավան է անցել այդ կենտրոնով, որոնց թվում կարելի է հիշատակել Մահալիա Ջեքսոնին, Էլլա Ֆիցջերալդին, Քաունթ Բեյսիին, Կառլոս Սանտանային, Բոբ Դիլանին, Սթիվի Ուանդերին, Արետա Ֆրանկլինին, Ռեյ Չարլզին, Արթուր Ռուբենշտեյնին, Ջին Քելիին, Հարրի Բելաֆոնտեին եւ շատ ու շատ ուրիշների անունները:

Հաշվի առնելով Թրամփի հակակրանքը բազմազանությանը եւ ինտելեկտուալիզմին ընդհանրապես, անհնարին եւ անտրամաբանական է տեսնել նրա անվան հայտնվելը մայրաքաղաքի կատարողական արվեստի այդ պատվավոր հիմնարկության ճակատին, որովհետեւ ծագումով ե՛ւ աֆրո, ե՛ւ լատինո, ե՛ւ այլ ազգությունների ամերիկացիներ մեծ վաստակ են ունեցել եւ ունեն, ամերիկյան համընդհանուր մշակույթի տարեգրության մեջ: Նրա ինքնագլուխ տնօրինությունը եւ անվան ապօրինի զավթումը բանականության դեմ մղած համատարած պայքարի ընդամենը մի մասն են: (Տե՛ս պատմաբան Ռիչարդ Հոֆստեդերի մասին պրոֆ. Բալաքյանի հոդվածը «ԱԶԳ»-ի 2025 թվի 5-11 սեպտեմբեր համարում): Նա հիմնահատակ քայքայել է բարձրագույն կրթության ենթաբաժինը (D.Ed), արժեզրկել գիտությունների ազգային հաստատությունը (NSF), հումանիտար գիտություններին ու արվեստներին մշտական եկամուտով ապահովելու ազգային կառույցը (National Endowment for the Humanities) եւ ռադիոհաղորդումների հանրային կորպորացիան (CPB): Նրա ջանքերը միտված են սահմանափակելու լրագրողների, վերլուծաբանների, քննական հետազոտությունների կենտրոնների անաչառ գործունեությունը եւ դեմ են սահմանադրության ուղղումներին (CA):

Արվեստները մարմնացումն են մարդկային ներզգայական ըմբռնումների, ճշմարտության բացահայտման կրքոտ վերաբերմունքի, երեւակայության անեզր դինամիզմի եւ լեզվի հանդեպ ակնածական կեցվածքի: Արվեստագետները խորաթափանց ներգրավվածությամբ ներկայացնում են մարդկային տառապանքները, խոցելիության հնարավորությունները, բարոյական նորմերի պահպանման անհրաժեշտությունը, ինքնախարազանման կարողությունները եւ գոյության ինչպես ողբերգական, այնպես էլ կատակերգական բարդ ծալքերը: Թրամփի մարդկայնության պակասը, հատկապես նրա երկրորդ իշխանության օրոք, վառ օրինակ է այս բոլոր արժեքների հանդեպ նրա ունեցած անհարգալից վերաբերմունքի: Նրա հարկադրական ստախոսությունները, մեքենայությունները եւ հաճախակի դարձած նողկալի վատաբանությունները զգալիորեն նվազեցրել են ամերիկացիների բարոյա-մշակութային արժեքների մակարդակը: Նրա արհամարհական վերաբերմունքը ընդհանրապես բազմազանությանը, փախստականների եւ միգրանտների հանդեպ դիրքորոշումը, սպիտակամորթ ոճրագործներին անգամ պաշտպանելու պատրաստակամությունը եւ ժողովրդի մեջ բաժանարար սեպ խրելու փորձերը անհարիր են արվեստների դավանած արժեքներին: Թրամփի եւ Քենեդու անունները պարզապես չեն կարող միաժամանակ բնութագրել այդ կենտրոնի առաքելությունը: Կարծում եմ ամերիկացիները կհամաձայնեն ինձ հետ, որ Քենեդին ինտելեկտուալ խորագիտությամբ օժտված անձնավորություն էր: Նրա խորհրդատուներն էին Արթուր Շլեսինգեր կրտսերը, Ջոն Քենեթ Գալբրայթը, ՄքՋորջ Բունդեյը: Մեծագույն պոետներից Ռոբերտ Ֆրոստը ելույթ ունեցավ նրա երդմնառության արարողության ժամանակ: Սպիտակ տան Քենեդի դահլիճը հանդիպման սիրելի վայրն էր պատվարժան գրողների, արվեստագետների եւ Նոբելյան մրցանակակիրների համար: Քենեդու լեզվական հմտությունները, առողջ բանականությունը, պահվածքը եւ մշակութային արժեքների վերաբերյալ անվերապահ հարգալից վերաբերմունքը հակոտնյա երեւույթներ են Թրամփի վարած քաղաքականությանը: Նախագահներ Քլինթոնն ու Օբաման, որոնց ինտելեկտուալ կարողությունները նույնպես տպավորիչ էին, չէին համարձակվել «ներխուժել» Քենեդի կենտրոն, գիտակցելով, որ այն սրբազան վայր էր սպանված մի նախագահի, որի շնորհքն ու տաղանդը համընկնում էին կատարողական արվեստի սկզբունքներին: Քլինթոնը ավարտել էր Յեյլ համալսարանի իրավաբանական բաժինը, Օբաման նախագահն էր Հարվարդի իրավաբանական պարբերականի վարչական կազմի: Թրամփը փորձում է ձեռք բերել Գրենլանդիան (եւայլ տարածքներ), անունը անարժանորեն հավերժացնել Քենեդի կենտրոնի ճակատին, արժանանալ Նոբելյան խաղաղության մրցանակին, հռչակել իրեն ամենակարող նախագահը, եւայլն, եւայլն: Նրա վարքագիծը բոլորովին սազական չէ պետության ղեկավարը լինելու հանգամանքին: Նրա կատարածը անհարկի բռնություն է, վանդալիզմ, որը հայտնի իրավաբան Ռաֆայել Լեմկինի բնութագրությամբ՝ հավասար է պետության մշակութային եւ արվեստաբանական հոգեւոր արժեքների քայքայմանը:

Առայժմ Ամերիկայի կատարողական արվեստի ներկայացուցիչները պահպանում են իրենց էթիկական հավասակշռությունը եւ իրենց ձայնն են բարձրացնում հանուն արդարության եւ օրինականության, հավատալով, որ դարձյալ կվերադառնան այդ կենտրոնը Թրամփի հեռանալուց հետո: Ինչպես բանջո նվագող Բելա Ֆլեքն է ասում՝ «Ես մեկ ուրիշ անգամ կնվագեմ ապագայում, երբ մենք միասին կվերականգնենք արվեստների տոնակատարությունները»:

«The Armenian Mirror-Spectator»-ից
ամփոփ թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

# Արմեն Ագոպը կներկայացնի Եգիպտոսը Վենետիկի բիենալեում



Ըստ https://cairoscene.com կայքէջի, Վենետիկի 61-րդ միջազգային արվեստի ցուցահանդեսում ծնունդով եգիպտահայ իտալաբնակ արվեստագետ **Արմեն Ագոպը** կներկայացնի Եգիպտոսը՝ եգիպտական տաղավարը վերափոխելով այնպիսի տարածքի, որը նա անվանում է «լսելու վայր»: Սակայն այս ճանապարհը սկսվել է մերժումով: 2011 թ., երբ նրան առաջին անգամ հրավիրեցին մասնակցելու բիենալեին, Կահիրեի փողոցներում եռում էր հեղափոխական շարժումը, եւ Թահրիրի հրապարակը դարձել էր փոփոխության պահանջի խորհրդանիշ: Ագոպը, իր արվեստանոցում՝ անապատի եզրին, շրջապատված գրանիտի զանգվածներով, որոնք նրան սովորեցրել էին համբերություն եւ լռություն, ընտրեց հրաժարվել մասնակցությունից՝ համոզված լինելով, որ այդ պահին իր արվեստն ասելիք չունի:

Տասնհինգ տարի անց նույն հրավերը կրկնվեց, եւ մայիսին Ագոպը կներկայացնի Եգիպտոսը Վենետիկում՝ ստեղծելով մի տարածք, որտեղ այցելուները կանցնեն երեք սրահներով՝ անշոշափելիից դեպի նյութականը եւ ապա դեպի խորհրդավոր անտեսանելին: Այստեղ խոսքն ու լուսանկարումը կսահմանափակվեն, իսկ հանդիսատեսը կհրավիրվի ընկալելու արվեստը լռության եւ ներքին կենտրոնացման միջոցով:

Ագոպն իր ստեղծած գործերը բնութագրում է որպես «ճշգրիտ երկիմաստություններ», որոնք հատուկ ձեւավորվել են տվյալ տարածքի լույսի եւ ճարտարապետության համար: Չնայած նրա ստեղծագործությունները արժանացել են միջազգային մրցանակների, Ագոպի արվեստը չի սահմանափակվում արտաքին գնահատականներով: Նրա համար առաջնայինն անտեսանելին է՝ այն ներքին էներգիան եւ հոգեւոր լիցքը, որը փոխանցում է ստեղծագործությունը: Նա շեշտում է, որ քանդակը պատմություն չէ եւ ուղերձ չի կրում ավանդական իմաստով. այն ներկայություն է, մի սահման՝ որտեղ դիտողը հանդիպում է ինքն իրեն:

Ագոպի ինքնությունը նույնպես բազմաշերտ է: Ցեղասպանությունը վերապրածի թոռը ծնվել է Կահիրեում եւ մեծացել մի երկրում, որն, իր խոսքով, միշտ բաց է եղել օտարների նկատմամբ: Այս փորձառությունը ձեւավորել է նրա պատկերացումը մշակութային համակեցության մասին: Եգիպտոսը ներկայացնելը նրա համար միայն ազգային պատիվ չէ, այլեւ խորհրդանշական մի քայլ՝ ցույց տալու, որ մշակույթները կարող են միավորվել՝ հաղթահարելով աշխարհագրական սահմանները:

Այսպիսով, Ագոպի մասնակցությունը Վենետիկի բիենալեին ոչ թե պարզապես միջազգային ճանաչման դրվագ է, այլ երկարատեւ, համբերատար ստեղծագործական ուղու բնական շարունակություն: Նրա համար արվեստը զվարճանք չէ, այլ գոյության ձեւ՝ մի ճանապարհ, որով մարդը կարող է հասնել իր ներքին ամբողջականությանը եւ, ի վերջո, միավորվել տիեզերքի հետ:

Ա. Բ.

# Անհնար է միտքը բանտել...

*Ծննդյան 90-ամյակի առթիվ*



*«Այո՛, ես հին, շատ հին, նույնիսկ հինավուրց մի հայ եմ ու հպարտ եմ դրանով, եւ իմ մասնագիտական բավարարվածությունը չի լքում ինձ»:*

Այսպես է գրում իր մասին հրապարակախոս, թարգմանիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀՀ ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ», Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՀԳՄ համատեղ «Կանթեղ» մրցանակների դափնեկիր **Արմեն Հովհաննիսյանը**, որ այս տարի կբոլորեր իր 90-րդ գարունը (1936-2011):

Արմեն Հովհաննիսյանի հրապարակախոսությունն այնքան ծավալուն է, որ շաբաթաթերթի մեկ սյունակի շրջանակում սահմանափակվելը բավարար չէ: Նրա հոդվածները կուռ են, ամբողջական, կառուցիկ, բովանդակային առումով համապարփակ. սակայն հրապարակախոսը միշտ թեման զարգացնում է այն հունով, որ վերջակետել ու այլեւս նյութի շուրջը չմտածել անկարող ես, զրույցը շարունակում ես ինքդ քեզ հետ, կրկին անդրադառնում շեղբի պես սուր հատվածներին ու հասկանում, որ ճշմարիտ խոսք ասողները որքան քիչ են այս աշխարհում, եւ երեւի թե նրանց ձայնը հասանելի չէ ստախոսներին. «Իսկ անտոհմ, անգերդաստան ու անծնող զավակներին մեր «համայնքային» ժողովուրդը ճիշտ նույնպես դարեր ի վեր կոչել է միայն մեկ անունով, որը... թողնում եմ ընթերցողի հայեցողությանը» («Վերնագիրը վերջում», էջ 28): Արմեն Հովհաննիսյանն աշխատում էր գրել ոչ թե այն, ինչը ընթերցողը կուզեր կարդալ, այլ խոսել այն ամենի մասին, ինչի մասին չի կարելի արդեն չխոսել եւ չի կարելի թաքցնել: Ըստ որում, առաջին հերթին հրապարակագրի համար շատ կարեւոր է, որ «ինքն իր հետ հաշտ լինի»: Նա վտանգավոր էր համարում, երբ մարդը սկսում է մտածել, թե ինքն անսխալական է եւ «ուսուցչի դեր է ստանձնում»: Իր իսկ խոսքերով՝ «Սա շատ կործանարար է յուրաքանչյուր հրապարակագրի, յուրաքանչյուր ժուռնալիստի համար, մանավանդ որ մեր մասնագիտությունն էլ դրա վտանգները պարունակում է»:

Տարիների հեռավորությունից վերհիշում եմ մեր անմիջական ու անկեղծ զրույցից բազում դրվագներ: «Ժամանակի հետ մարդուն թվում է, թե ինքն ամենագետ է ու նաեւ վերին ատյանի իրավունքներ է ձեռք բերել ասելու համար այն, ինչին, ենթադրենք, բոլորը պետք է հետեւեն: Ո՛չ: Եթե դու ինքդ քեզ հետ հաշտ չես, արդեն ընթերցողն էլ հաշտ չի լինի»,- ասում էր Արմեն Հովհաննիսյանը:

Երբ կարդում ես «Հավերժ լեզուն՝ մայր հայերեն» խորհրդածությունը, հասկանում ես, որ հրապարակագրի խոսքը մեծ ուժ է, նա համոզում է, ուղղում է, հարկադրում է: Իսկ խոսքն այստեղ ամենակարեւորի մասին է, մեր անզուգական լեզվի մասին է, որի դեմ մեղանչում են ամեն քայլափոխի. «Լեզուն թպրտում է, շնչահեղձ է լինում, լեզու առած աղաղակում է, որ խոպան ու աղուտ չդարձնենք նաեւ իր բարեբեր արտերը, ժանգով չպատենք իր արծաթաշեղբ խոփը՝ սիրո, գոհության, գութի եւ խղճի, նվիրումի եւ հույսի, գեղեցկության եւ հավերժի, մաքրության եւ ժպիտի փուխր ու տաք ցելերի մեջ»: («Խորհրդածություններ երկրորդ էջի համար», Երեւան, 1993, էջ 3):

Դաժան ու անողոք օրինաչափություններ ունի հրապարակախոսի մասնագիտությունը: Հարգանքն ու վստահությունը նա վաստակում է տարիների իր աշխատանքով, ինքնազոհումի ու նվիրումի գնով, հեղինակությունն ու վարկն էլ կարող է կորցնել աննկարագրելի արագությամբ, մեկ-երկու օրում, մեկ-երկու տողով: Ուստի՝ ճշմարտությունից հրաժարման հետեւանքն է անպատկերացնելի, թե՛ մարդու, թե՛ երեւույթի համար, ինչը տեղի ունեցավ 95-ի ամռանը ընտրությունների եւ հանրաքվեի ժամանակ, երբ պետական ընտրական համակարգը գործում էր «բուլդոզերային եղանակով»՝ որպես պաշտոնական արդյունք ներկայացնելով բացահայտ սուտն ու կեղծիքը: Այսպիսով, համարձակ ու անվախ տողերի հեղինակը, անշուշտ, միշտ էլ կընտրի ասպետական բացճակատ եղանակները, քանզի պատասխանատու է իր խղճի ու հոգու առաջ եւ երբեք չի կարող արատավորել իր ստորագրության պատիվը: Նա քաջ գիտակցում էր, որ ամեն մի երկիր իր անկրկնելի պատկերով պարտական է ժողովրդին: Ճշմարտությանը հետամուտ մարդը Հյուգոյի հետեւյալ միտքն է կարգախոս դարձնում. «Զննեք ժողովրդի խորքերը, եւ դուք կտեսնեք ճշմարտությունը»:

Հայրենիքը Արմեն Հովհաննիսյանի համար սկիզբ է առնում մայրենի լեզվի նվիրական ղողանջներից, հողի, ջրի, պտղի ու հացի բույրերից, նարնջագույն մայրամուտի հրդեհների մեջ ուրվագծվող եկեղեցու գմբեթից, հինավուրց ու նոր հանգստարանների խորունկ լռությունից, լեռնապարին ուղղված վաղնջական «է-հե-հե-հե՜յ»-ի արձագանքումից, այբբենարանից սկսվող մուտքից՝ իմացության աշխարհ՝ «Արա, ասա, սար»... Եվ այս խոսքերն, իբրեւ հրավեր, ուղղված են հարգելի ընթերցողին, քանզի մեզնից յուրաքանչյուրը թող յուրովի պարզի Հայրենիք եւ Սեր ըմբռնումների իմաստն ու խորքը:

Արմեն Հովհաննիսյանի հոդվածներն երբեք չեն կորցնում իրենց արդիականությունը: Դեռեւս 18-րդ դարում գերմանացի գիտնական եւ գրող Գեորգ Քրիստոֆ Լիխտենբերգը գրել է. «Այնտեղ, որտեղ չափավորությունը սխալմունք է, անտարբերությունը հանցագործություն է»: «Ինչպե՞ս է լինում այդպես» հոդվածում խոր վերլուծական ենթատեքստով շարադրում է հասարակության մեծագույն չարիքի՝ անտարբերության հետեւանքներն ու պտուղները: Արմեն Հովհաննիսյանը անտարբերությունը ճշմարտացիորեն որակում էր «խլուրդային դիրքորոշում», «Ես իմ հոգսերն ունեմ, քաղաքականությամբ չեմ զբաղվում» բառերը՝ քաղքենիություն:

Սփյուռքի, սփյուռքահայության հարցերը միշտ էլ եղել են պատմաբանների, ազգագրագետների, հրապարակախոսների ուշադրության կիզակետում: Գրասեղանիս է «**Ազգ**» օրաթերթի 1995 թ. նոյեմբերի 16-ի համարը, որտեղ տպագրվել է Արմեն Հովհաննիսյանի «Տարակարգ հայություն» հոդվածը. հեղինակն արծարծում է Հայրենիք-Սփյուռք հիմնախնդիրները: Սփյուռքը մեր պատմության ամենացավոտ էջերի հետեւանքն է, բնօրրանից դուրս հայությունը, որ պահպանում է իր ազգային դիմագիծը: Հենց «սփյուռքահայություն» տերմինն է սկսել օգտագործվել 1920-ական թթ. սկզբից: Դարեր շարունակ Հայաստանը իր աշխարհագրական դիրքի եւ տնտեսական նշանակության պատճառով ենթարկվել է տարբեր նվաճողների ասպատակությունների, զանգվածային կոտորածների եւ մեծ ավերածությունների, ինչն առաջացրել է հայ բնակչության պարբերական արտահոսք: Սփյուռքահայերն ապրել են արհավիրքներ ու ցնցումներ, անորոշություն, արհամարհանքի ու անքաղաքացիության դառնությունը, սակայն հաղթահարելով դրանք՝ ձեռք են բերել որոշ տնտեսական, քաղաքական ու մշակութային կայունություն: Պետական հեղինակավորությամբ համաժողով հրավիրելու գաղափարը ժամանակին առաջարկել է Արմեն Հովհաննիսյանը, որն իրականություն է դարձել 1999 աշնանը. «Լրագրային արծարծումներով ընդամենը շոշափել կարելի է հիմնախնդրի եզրերը»:

Արմեն Հովհաննիսյանն իր հոդվածներում բազմիցս է անդրադարձել Արցախյան հիմնախնդրին, որի հետ կապված հայ ժողովուրդը ծանր ուղի է հարթել կորուստների ու զրկանքների գնով: Ձեռքբերումների ու նվաճումների փոշիացումը Արմեն Հովհաննիսյանը համարում էր «հայոց համազգային անշնորհքություն ու անկարողություն»:

Թերեւս ծավալուն ու ընդարձակ ատենախոսության նյութ կարող է ծառայել Արմեն Հովհաննիսյանի հրապարակագրության լեզվի եւ ոճի քննությունը: Սա՝ արդեն՝ առանձին հոդվածով:

Տողերիս հեղինակի համեստ կարծիքով, հայ հրապարակախոսական մտքի պատմության անդաստանում Արմեն Հովհաննիսյանի անունը աներկբայորեն կգրվի ոսկե տառերով: Նա 20-րդ դարի երկրորդ կեսի առաջադիմական ոգու մարտիկներից է եւ իրավամբ հայ հասարակական մտքի այդ էտապի ականավոր դեմքերից մեկը:

Ժամանակը թանկ է, սակայն ժամանակից ավելի թանկ է ճշմարտությունը: Հենց ճշմարտության փարոսն է Արմեն Հովհաննիսյան-հրապարակախոսը առաջարկում մշտապես վառ պահել՝ որպես պատգամ: Միտքը անհնար է բանտել...

**ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՏԱՃԱՏԻ ՍԱՀԱԿՅԱՆ**
բանասեր, թարգմանիչ

# Գեորգի Գախարիա. «Կա՛մ Հրվ. Կովկասի համար...»

⇨1 Տարիներ ի վեր Վրաստանն է դիտարկվել՝ որպես եվրոպական այլընտրանք Հայաստանին, մի երկիր, որ թվում էր Ռուսաստանի ազդեցության տիրույթում էր: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ղեկավարած Հայաստանը սկսել է զգուշավոր, սակայն կայուն մերձենալ Եվրոպային: 2021 թվականի գործընկերության համաձայնագիրը (CEPA) շրջադարձային էր եւ ստեղծեց ավելի սերտ համագործակցության հիմք»: Վրաստանի նախկին վարչապետի գնահատմամբ, այժմյան մտահոգիչ զարգացումները ստվերում են իր երկրի ձեռքբերումները:

«2024-ին կայացած խորհրդարանական անհաջող ընտրություններից հետո, կառավարությունը կասեցրեց ԵՄ-ին անդամակցության գործընթացը, գրում է Վրաստանի նախկին վարչապետը: «Բարեփոխումներն առաջ մղելու փոխարեն երկիրը ժողովրդավարական զարգացման հետընթացի մեջ է, խաթարում է վրաց ժողովրդի՝ տասնամյակների ընթացքում մեծ դժվարությամբ կառուցածը՝ Եվրոպայի եւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունները: Նույն այդ ժամանակ Հայաստանն առաջընթաց է գրանցում: Մասամբ ներշնչվելով Վրաստանի թեկնածուի կարգավիճակից՝ Երեւանը քայլեր է ձեռնարկել դեպի ԵՄ, խորացրել հարաբերությունները ԱՄՆ-ի հետ՝ ցույց տալով արտաքին քաղաքական հստակ վերակողմնորոշում», վերլուծում է Վրաստանի նախկին վարչապետը, որ վերոբերյալ հակադիր զարգացումը դիտարկում է որպես տարածաշրջանի համար լայնածավալ հետեւանքներ պարունակող: «Երկու երկրների եվրոպական հեռանկարներն ավելի սերտորեն են փոխկապակցված, քան հաճախ ենթադրում են: Ծովային ելքից զուրկ Հայաստանը մեծապես կախյալ է հարեւան երկրներով անցնող տրանզիտային ուղիներից: Վրաստանը ՀՀ-ի՝ դեպի Եվրոպա հիմնական դարպասն է՝ առեւտրի, էներգետիկայի եւ Սեւ ծովի նավահանգիստներին հասանելիության առումով: Առանց Եվրոպային ամուր խարսխված Վրաստանի՝ ՀՀ-ի ուղին զգալիորեն բարդանում է», կարծիք է հայտնում Վրաստանի նախկին վարչապետը՝ նկատել տալով, թե «եվրոպական ուղղվածությամբ Վրաստանն ամրապնդում է Հարավային Կովկասի կայունությունն ու վստահելիությունը, խթանում է տնտեսական ինտեգրումը եւ ապահովում Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի եւ դրանից անդին գտնվող տարածքների հետ հուսալի միջանցքի գոյությունը»: «Եթե Վրաստանը հեռանա այս ուղուց, այդ զարգացումը կարող է փլուզվել՝ երկու երկրների համար հետեւանքներ ուրվագծելով, ինչպես նաեւ ԵՄ-ի տեսանկյունից տարածաշրջանի ռազմավարական արժեքի առումով: Վրաստանում Ռուսաստանի ազդեցության աճը կսահմանափակի նաեւ ՀՀ- ի գործողությունների հնարավորությունները: Հայաստանը գիտակցում է սա»: Գեորգի Գախարիան հիշեցնում է ՀՀ վարչապետի՝ Եվրոխորհրդարանում հնչեցրած ելույթը, որի ժամանակ Փաշինյանը կոչ ուղղեց ԵՄ-ին վերսկսելու Վրաստանի հետ երկխոսությունը՝ սառեցված այդ հարաբերությունները դիտարկելով որպես ՀՀ-ի ՝ ԵՄ ինտեգրման ճանապարհի ամենամեծ խնդիր:



***Գեորգի Գախարիան***
***2019-2021-ին եղել է Վրաստանի վարչապետը:***
***Լուսանկարը՝ tablemedia-ի:***

«Եվրոմիության համար երկու երկրներին սատարումը «պարզապես լավություն» չէ, այլ ռազմավարական ներդրում՝ Եվրոպայի եւ Ասիայի միջեւ գտնվող կարեւոր տարածաշրջանում կայունության, կապակցվածության եւ ՌԴ-ի ազդեցության նվազեցման մեջ: Բրյուսելը պետք է շարունակի աջակցել Հայաստանի բարեփոխումների ընթացքին, միաժամանակ պահպանի կապը վրաց հասարակության եւ եվրոպամետ ուժերի հետ, նույնիսկ Վրաստանի կառավարության հետ բարդ հարաբերությունների պայմաններում: Խաղաղությունը, բարեկեցությունը եւ փոխկապակցվածությունը Հարավային Կովկասում հնարավոր չեն առանց Վրաստանի: Անհրաժեշտ է պահպանել ձեռք բերվածը, որպեսզի քաղաքական պայմանների բարելավման ժամանակ հնարավոր լինի վերսկսել առաջընթաց ուղին,: Այժմ ընտրությունը հստակ է. կա՛մ Հարավային Կովկասի համար ձեւավորվում է եվրոպական միասնական հեռանկար, կա՛մ հերթական հնարավորությունն ի չիք է դառնում», կանխատեսում է Գախարիան:

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# Լույս է տեսել Էդուարդ Խաչիկյանի «Մեսրոպ Մաշտոց. հայոց գրերի գյուտը» նոր պատմավեպը

Հայոց գրերի ստեղծման վերաբերյալ մասնագիտական գրականության պակաս, թվում է, չկա: Այդուհանդերձ, մաշտոցյան գրերը պարունակում են առեղծվածներ, որոնց վերծանման գայթակղությունը ժամանակ առ ժամանակ արթնանում է, հրարամերժ կարծիքների բախման առիթ տալիս եւ անհավանական, անգամ, հակագիտական վարկածների համար հող հանդիսանում: Մեր ապրած ժամանակներում այս երեւույթը սուր, երբեմն, անհեթեթ, ժխտողական դրսեւորումներ է ունենում, եւ ապազգային մտածելակերպին ու գնահատումներին հակադարձելու հրամայականի արտահայտությունն է արձակագիր **Էդուարդ Խաչիկյանի** նոր՝ «**Մեսրոպ Մաշտոց. հայոց գրերի գյուտը**» վեպը: Էդ. Խաչիկյանն այն հեղինակել է 2025-ին՝ բավական կարճ ընթացքում՝ հիմք ունենալով մինչ այս առկա հարուստ աղբյուրները՝ վաղ եւ ուշ միջնադարյան պատմիչների երկեր, արդի հայագիտական եւ երաժշտագիտական գրականություն եւ այլն, սակայն սեփական գեղարվեստական հորինվածքի կաղապարումով: Վիպագիրը երկու տասնյակից ավելի գրքերի հեղինակ է, Դերենիկ Դեմիրճյանի անվ. գրական մրցանակակիր, արցախյան ազատամարտի մասնակից, գնդապետ: Ի տարբերություն իր նախորդ պատմավեպերի, որոնց թվում են «Սմբատ Գունդստաբլ», «Ղեբուբան կամ արքայի գործակալը» վեպերը, «Մեսրոպ Մաշտոց. հայոց գրերի գյուտը» չունի սովորական սյուժետային զարգացում՝ հստակ հանգույցով, գագաթնակետով եւ հանգուցալուծմամբ: Վեպի երկու մասերը սյուժետային գծով թույլ են կապված եւ կարող են դիտվել՝ իբրեւ առանձին վիպակներ:

Գլխավորը, ինչը կապում է վեպի երկու մասերը, մաշտոցյան գրերի ստեղծման պատմական անհրաժեշտության փաստի մանրամասն քննությունն է՝ գրերի գյուտին նախորդած ուսումնասիրությունների խորազննութամբ, նախամաշտոցյան նշանագրերի համակարգերի մասին ծանուցումներով, վարդապետին տեսլացած գրերի գիտական-գեղագիտական ներկայացումը, դրանցում առկա բազում թաքնագրությունների բացահայտումները: Դա արվում է հետեւողականորեն, համարյա ամեն զրույց, երկխոսություն, պատմական իրադարձություն առիթ անելով՝ նորից ու նորից քննության առնելու Հայոց պատմության ամենանշանակալից եւ հիմնարար իրադարձություններից մեկը, այն է՝ մաշտոցյան գրերի արարումը: Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու վարքը նկարագրելը չէ՛ հեղինակի նպատակը. դա հրաշալի արվել է մեր պատմիչների մատյաններում: Բայց նրա



կերպարը գեղարվեստական արտահայտություն է ստանում գրքի առաջին մասում: Այն սկսվում է Հայոց Վռամշապուհ արքայի հրամանով՝ Մաշտոցի ուղեւորության եւ ուսումնասիրությունների պատմությամբ: Պատումը շարունակվում է ժամանակին առկա գրային համակարգերի ներկայացմամբ, թե ինչո՞վ բացատրել Մաշտոցի տեսիլքը, եւ թե ո՞նց, որտե՞ղ եւ ե՞րբ, ի՞նչ հենքի վրա են ծագել հայոց տառերի հեղինակային գաղափարները, ի՞նչ մտքեր եւ գաղտնագրություններ են դրանք իրենցում կրում: Հեղինակը վեպի գեղարվեստական պատումը հաճախ ընդհատում է գիտական-փաստագրական ծավալուն ուսումնասիրությունների ներկայացմամբ, որոնցում բացահայտվում են հայոց տառերի մաթեմատիկական, աստղաբանական, թվագրման, քիմիական տարրերի կարգաթվերի նախանշման, տարածական երկրաչափության, աստղագիտության, ինչպես նաեւ աստվածաբանական թաքնագրումները: Բայց առավել՝ գրքի հերոսների բերանով խոսում է մաշտոցյան հանճարի զորության, նրա արարման ազգապահպան-պատմական նշանակության մասին՝ ազգի գոյության եւ հաստեւման փաստն անմիջականորեն կապելով հայոց լեզվի եւ սեփական գրերի գոյության հետ: «Այսուհետեւ պարտավոր ենք լուսեղեն ազգ լինել եւ արեւածաղկի նման դեպի արփին ձգվել, որպեսզի մեր գիրն էլ արեգակի պես ճաճանչվի»,- պատգամում է Սահակ Պարթեւ կաթողիկոսը Մաշտոցին:

Թեեւ ոչ գլխավոր, բայց վեպի հիշարժան կերպարներ են Մաշտոցի աշակերտները, որոնց գործերին ըստ արժանվույն գնահատականների ենք հանդիպում գրքի երկրորդ մասում: Բայց նրանց կերպավորումները վեպում գլխավորապես ծառայում են Մաշտոցի անձն ու գործի նշանակությունը քանիցս եւ բազմակողմանիորեն ներկայացնելուն: «Մեսրոպյան 36 հրաշատես տառերն ազգի պահպան աշխարհազորն են ու աշխարհում նմանը չունեն, քանզի ոչ միայն սովորական գիր են, այլեւ մեծ փիլիսոփայությամբ ու մոգությամբ են օժտված,- սեպուհ Սիփան Պալունու հետ




զրույցներից մեկում ասում է Մովսես Խորենացին:- ...Չի կարելի Ուսուցչի գործը կասկածի տակ առնել՝ նսեմացնելով նրա մեծ ավանդը»: «Արժանիքները բազում են, բայց ըստ իս՝ ամենակարեւորը լեզվի կառուցվածքի գիտակցական, տրամաբանությունն է, եւ իհարկե, նաեւ օրգանական թաքնագրումները»,- Ղազար Փարպեցու գնահատականն է: «Մաշտոցի տառաստեղծումը հանճարեղ գյուտ է եւ գիտական սխրանք»,- մեջբերում է Կորյունի խոսքից: Իսկ Եզնիկ Կողբացին գրերը համարում է մշակութային մի նոր հզոր զենք. «Գրերի գյուտն ակամա արթնացրեց ժողովրդի ինքնագիտակցությունը եւ ազատատենչ ձգտումները»: Հայ բոլոր սերունդներին է ուղղված Կողբացու պատգամը. «Ճոխ է հայոց լեզուն, եւ իրապես կվարձատրվի նա, ով խորապես կուսանի մեր աստվածատուր մայրենին, քանզի մեր լեզվի զորությունը գերբնական է: Եվ լեզվի մեջ է այն դյութական ուժը, որի առջեւ ոսոխներն անզորանում են...»:

Մի այլ առիթով պահնորդական գնդի պետ եւ Արտաշես արքայի հանձնակատար սեպուհ Պալունին, զինվորականին հատուկ պատկերային մտածողությամբ, մեսրոպյան գրերին իր բնութագիրն է տալիս. «...Մարդաշար կազմած լեգեոն է՝ թշնամու դեմ կռվի պատրաստ: Եվ ամեն տառն իր տիեզերական բաժինմասն ունի»:

Այսպես, վիպասանը մաշտոցյան գյուտի վերաբերյալ իր կարծիքն ու բնորոշումները շարունակաբար բաշխում է վեպի հերոսների՝ պատմիչների եւ Սիփան Պալունու տասնյակ զրույցներում՝ այս կամ հերոսին վերագրելով վերոհիշյալ ձեւակերպումները:

Գրքի առաջին վիպակում Մաշտոցը ներկայանում է ոչ միայն որպես գիտնական եւ ուսումնասիրող, այլ նաեւ՝ որպես զինվորական, ազգի հոգեւոր հովիվ: Սեպուհ Պալունին, որի կերպարը գծագրվում է առաջին վիպակում եւ երկրորդում դառնում գլխավորը, վկայում է Մաշտոցի՝ ուսումնական այրի, քաջ հրամանատարի, խստակեց հոգեւորականի, երաժշտի, «անգերազանցելի տիտանի» դերակատարությունն իր ապրած ժամանակներում: Նա, իր իսկ խոսքերով, «համառությամբ իր ներքին տաճարն էր կառուցել»:

Պատմավեպի կարեւոր բնութագրիչներից է հերոսների պատմական նախատիպերի առկայությունը: Նմանները շատ են Էդ. Խաչիկյանի գրքում, սակայն երկրորդ բաժնի կենտրոնական գործող անձը հնարածին է՝ նրա մեջ ամփոփելով հայ զորականի, մտածող եւ սեփական երկվություններն ունեցող, դրանք հաղթահարող անձի հատկանիշները: Զուր չէ, որ ստրկության տարված, մանկուրտի վերածված եւ ապա գերությունից փրկված ազնվազարմ պատանու կերպարը հեղինակը քիչ առ քիչ դարձնում կենտրոնական: Մանկուրտ, ասել է, թե՝ հիշողությունից ստիպմամբ զրկված մարդը կողմնակիորեն հիշեցնում է ներկայիս այն սերունդը, որը հասակ է առել խորը գիտելիքից, իր արմատների զգացողությունից, ոգեղենությունից զրկված, կեղծ ու կործանարար արժեհամակարգերով առաջնորդվելով: Գողթան գավառի իշխան Շաբիթի փրկված մանկուրտը, պարզվում է, Պալունիների սեպուհական տոհմից էր, եւ նրա նոր հիշողությունն ու աշխարհընկալումը ձեւավորվում է հայոց սահմանները պաշտպանելու, Մաշտոցին օտար երկրներում ուղեկից եւ թիկնապահ լինելու, ապա եւ արքայի վստահելի ու հավատարիմ զորականների շարքը դասվելու ընթացքում: Նրա հարցասիրությունն ու անհանգիստ միտքը դրդում են շարունակաբար անդրադառնալու գրերի գյուտի նշանակությանն ու արժեքին: Նա, մի տեսակ, գործիք է՝ պրպտելու եւ բացահայտելու հայոց գրերի թաքնագրությունները:

Հնարածին է նաեւ սեպուհ Սիփանի կնոջ՝ արցախցի Հայարփիի կերպարը, որը սերտելով հայոց գրերը՝ դառնում է ուսուցանող եւ արքայի թույլտվությամբ բացված առաջին օրիորդաց դպրոցի կին ուսուցիչը: Սա հեղինակի մտահղացումների շարքից է, կարելի է ասել՝ ենթադրությունը, քանի որ ուսյալ, կրթյալ իշխանուհիների եւ ազնվազարմ կանանց շատ անուններ են հայտնի հայոց պատմությունից: Հենց Հայարփիի խոսքում է կարոտով հիշատակվում Ղազանչեցոց եկեղեցին, ինչը հեղինակի կողմից պատմական իրողության զանցառում է. Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին կառուցվել է նկարագրված իրադարձություններից շուրջ 14 դար անց: Բայց պատմավիպագրության մեջ երբեմն նման դիտավորյալ «վրիպումները» թույլատրելի են, երբ հատկապես անհրաժեշտություն է ծագում ժամանակների միջեւ կապը եւ խնդիրների արդիականությունը շեշտելու:

Պատումն աշխուժացնում են բյուզանդական եւ պարսից զորագնդերի, ավազակախմբերի հետ բախումների, նաեւ պատմական ճակատամարտերի մասին պատմող էջերը: Պատերազմական գործողությունների նկարագրությունները, ինչպես Էդ. Խաչիկյանի մյուս պատմավեպերում, խիստ հավաստի են՝ մարտական գործողությունների կենդանի պատկերներով, զենքուզրահի նկարագրերով, առասպելականի եւ իրականի ներդաշն միախառնումով: Երկրորդ մասում սրան գումարվում են երեք-չորս դետեկտիվային կարճ պատմություններ, որոնց հանգուցալուծումը տալիս է սեպուհ Պալունին:

«Մեսրոպ Մաշտոց. հայոց գրերի գյուտը» վեպը, որոշ առումով, գիտա-հանրամատչելի գրականությանը համազոր երկ է, հայրենանվիրության դասեր պարունակող ուսումնական ձեռնարկ, որը կարող է եւ պետք է ծառայի դպրոցներում դասավանդող ուսուցիչների համար՝ որպես հավելյալ նյութ՝ մեր գրերի դերն ու նշանակությունը խորքայնորեն ներկայացնելու համար:

Գիրքն ընթերցելիս՝ տեղ-տեղ այն տպավորությունն ես ունենում, թե գործողությունները զարգանում են մեր օրերում, հատկապես երբ խոսվում է քաղաքական սրացումների, խառնակ ժամանակների, հայոց սպառնացող սահմանային նոր բաժանումների, բնակավայրեր զավթելու՝ ոսոխի անիրավ նկրտումների, անկախության վերականգնման հրամայականի մասին: Հեղինակն իր համոզմունքն է շարադրում ծագմամբ արցախցի հերոսներից մեկի բերանով. «...Հողը արյունից է լիանում: Մեր Արցախ երկիրն էլ իր արյունով է պարարտացնում մեր հող հայրենին, որն օտարի ոտքերի տակ կրակարան է դառնում»:

«Ազգն իր ոգեղեն անկման մեջ է, հիասթափությունն է հոշոտում նրա հիվանդ մարմինը»,- կարդում ենք եւ ակամա համեմատություն անում տասնվեցդարյա հեռավորությունից: «Հայոց պարարտ հողում գալիք հաղթանակների սերմերը, ցավո՛ք, հողի տակ են պայթում՝ առանց ավելորդ գովազդի: Պիտի հավատանք մեր ուժերին, որ հաղթանակը մերը լինի...»:

# Ցույց Դոնի Ռոստովում՝ ի պաշտպանություն Հայ Առաքելական եկեղեցու



Հայկական սփյուռքը տեսնում է՝ ինչպես Հայաստանում տեղի են ունենում հալածանքներ եկեղեցու նկատմամբ: Այդ պատճառով այսօր հատկապես կարեւոր է, որ Հայ Առաքելական եկեղեցու հոգեւորականներն իրենց աջակցությունը հայտնեն հավատացյալներին, «Վզգլյադ» թերթին ասաց Սուրբ Խաչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Հարություն Տերտերյանը: Կիրակի օրը Դոնի Ռոստովում տեղի է ունեցել հանրահավաք՝ ի պաշտպանություն Հայ եկեղեցու:

«Հայ Առաքելական եկեղեցու պաշտպանության միջոցառումը հաջողված էր: Հատկապես կարեւոր է, որ դա տեղի ունեցավ այն օրը, երբ մեր Եկեղեցին նշում էր Ծաղկազարդը»,- ասաց Տեր Հարությունը: Նրա գնահատմամբ, հանրահավաքին մասնակցել է առնվազն 1500 մարդ:

Թերթի զրուցակիցը նշեց, որ Հայ եկեղեցին աջակցության կարիք ունի: «Այն, ինչ այժմ տեղի է ունենում Հայաստանում, որտեղ չորս արքեպիսկոպոսներ ձերբակալվել են, չի կարելի կոչել այլ կերպ, քան հալածանք իշխանությունների կողմից: Իհարկե, մեր հավաքին քաղաքական կարգախոսներ չեն հնչել, բայց համայնքի հավատացյալներն իմացան՝ մենք իրենց հետ ենք»,- շարունակեց հոգեւորականը:

Միջոցառման հարթակից հավաքվածներին են դիմել տեղական պատգամավորներ, հոգեւորականներ, հանդես են եկել ստեղծագործական խմբեր: «Յուրաքանչյուր ելույթ ունեցող իր աջակցությունը հայտնեց Հայաստանի սովորական մարդկանց եւ Հայ եկեղեցու բոլոր հետեւորդներին»,- հավելեց Տերտերյանը:

Միջոցառման բազմամարդությունը ցույց տվեց, որ «անհնար է իսկապես վնասել եկեղեցուն»,- եզրափակեց հոգեւորականը:

«Հանուն ազգային միասնության եւ հաջակցություն Հայ Առաքելական եկեղեցու» հավաքին մասնակցել են եկեղեցու ծխականները եւ Ռոստովի մարզի հայ համայնքի անդամները: Ելույթներ են ունեցել նաեւ Հայ եկեղեցու ներկայացուցիչներ, հատուկ ռազմական գործողության մասնակիցներ ու տեղական համայնքների ներկայացուցիչներ:

Մեկ շաբաթ առաջ նման հավաք է տեղի ունեցել Կալինինգրադում: Միջոցառումն անցկացվել է Սուրբ Ստեփանոս եկեղեցու տարածքում: Այն կազմակերպել է «Նոյի ժառանգորդներ» հասարակական շարժումը...

Հիշեցնենք, Հայաստանի իշխանությունների եւ ՀԱԵ-ի միջեւ հակամարտությունն ուղեկցվում է հոգեւորականների եւ բարերարների ձերբակալություններով: Սփյուռքի ներկայացուցիչները տեղի ունեցողն անվանում են քաղաքական հալածանք եւ վրդովմունք են հայտնում պաշտոնական Երեւանի գործողությունների համար:

Միեւնույն ժամանակ Հայաստանի վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** Հայ Առաքելական եկեղեցու ընդդիմադիր տրամադրված հոգեւորականներին համեմատել է արմատական իսլամիստների հետ:

Ռուսաստանն ուշադիր հետեւում է իրադարձությունների ծավալմանը, հայտնել են [երկրի] ԱԳՆ-ից:

**«ՎԶԳԼՅԱԴ» ռուսաստանյան գործարար թերթից**
**Թարգմանեց Գ. ՄԿՐՏՉՅԱՆԸ**

# Մեր հոգսերը կարծես մերը չեն

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

Հայաստանյան առօրյան Աստծո յուրաքանչյուր օր երկակի տրամադրությամբ է սկսվում ու ավարտվում: Մեզնից յուրաքանչյուրի շրջապատում նվազագույնը 100-ից 200 մարդ կա, հարազատ ու բարեկամ, ծանոթ ու հարեւան, ուսումնառության ու աշխատանքային տարիների ընկերներ, կրթական ու անգամ կրոնական դավանանքով զանազանվողներ: Թե սույն մտորումների հեղինակը, թե՛ այլեւայլ երկրներում թող որ ժամանակավոր ապաստանած մեր հայրենակիցները կեսբերան շշնջում են, թե՛ երբ է Հայաստանում ապրելու տանելի միջավայր հաստատվելու, որ իրենք էլ իրենց ապագան ուրվագծեն, երազների գոնե մի մասը իրականություն դարձնեն: Ավաղ, ժամերը օրեր են դառնում, օրերը շաբաթներ, վերջիններս ամիսներ ու տարիներ, տարօրինակորեն թե ցավալիորեն ՀՀ համարվող տարածքում տեսանելի ու շոշափելի գրեթե ոչինչ չի փոխվում, եթե այլ գնահատական չհնչեցնենք:

Գործադիր իշխանության խնդիրը, որն է երկրի կառավարությունը, ՀՀ անվտանգային հարցերի լուծումն է, որտեղ առաջնայինը պետության ռազմական ու պարենային անվտանգության խնդիրների սահմանումն է: Ասենք, 3 մլն հայաստանաբնակների պարենային պահանջմունքները բավարարելու համար, համաշխարհային չափորոշիչները նկատի ունենալով, անհրաժեշտ է արտադրել նվազագույնը 300 հազար տոննա թռչնի, խոզի ու տավարի միս եւ մոտ 1 մլն տոննա կաթ, կաթնամթերք ունենալու նպատակով: Այս պարզ, կարելի է անգամ ասել պարզագույն խնդիրը լուծելու համար համաշխարհային տնտեսավարումը բավարար փորձ կուտակել է, այն սիրահոժար ցուցադրում է ի տես Երկիր մոլորակի յուրաքանչյուր պետության, խտրականություն չդնելով մարդկանց ո՛չ կրոնական պատկանելիության, ո՛չ էլ մաշկի գույնի առումներով: Ասենք, երեք հիմնական արդեն նշված մսատեսակների համաշխարհային արտադրությունը 2000 թվականի 220 մլն տոննայից 2020 թվականին հասել է 330 մլն տոննայի: Իսկ ինչ վիճակ է Հայաստանի Հանրապետությունում:

Միայն այն, որ գյուղապետարաններից սկսած, մարզպետարաններով շարունակվող, նախարարություններով կառավարվող, ի վերջո ՀՀ գործադիր մարմնի պատասխանատվությամբ սահմանափակվող պատասխանատու կառույցների պաշտոնյաները տարին տարու վրա երբեւէ անգամ նվազագույնս չեն անդրադառնում ՀՀ պարենային ապահովության ու անվտանգության խնդրին, նախապատվություն տալով հանրությանը զբաղեցնել սուբսիդավորում հռչակվող ինչ-որ ծրագրի շուրջ թվեր հրապարակելով, գյուղական համայնքներում բնակարանաշինությունը խրախուսելով: Մի՞թե պարզ չէ, որ 30-40 տոկոս գյուղական բնակչություն ունեցող երկիրը չի կարող լիարժեք զարգանալ, ընդօրինակելի կրթական, առողջապահական, այլ անհրաժեշտ առաջնահերթությունների բավարարման ներուժ ունենալ, որը մենք տեսնում ենք մերօրյա ՀՀ-ում: Մանկությանս ընկերներից մեկը, որ ընտանեկան խնդիրների պատճառով մի որոշ շրջան բնակվել էր Բելգիայում, մեր յուրաքանչյուր հանդիպման հիշում է անվճար բնակարանի ու դեղորայքի, ծանոթ ուսանողների կրթաթոշակների ու քաղաքային տրանսպորտի անվճար երթեւեկի շուրջ փաստերից: Ինչպես է դա հաջողվում ՀՀ տարածքի չափ տարածք ունեցող 12 մլն բնակչությամբ երկրում, երբ մենք հարցերից ու խնդիրներից պրծում չունենք: Նշեմ ակտիվ լրագրությամբ զբաղվող քաղաքացու հետաքրքրությունների շրջանակի մի թիվ, որի մասին արդեն խոսել եմ. Բելգիայում միայն խոզի մսի տարեկան արտադրությունը հասնում է 1,2 մլն տոննայի: Փորձեցի մեր պահանջարկը բավարարող թվերից գանձվող հարկերի մոտավոր թիվ հաշվարկել: Տրիլիոն դրամների թվեր ստացվեցին, նույնը՝ կաթի վերամշակման պարագայում, որը ՀՀ-ից հոսում է արտերկրներ, ներմուծվող կաթի փոշու, խոր սառեցված մսատեսակների, կարագի, այլ առաջնահերթությունների տեսքով: Անգամ նվազագույն հարկման պարագայում գանձվող հսկայական գումարներ են գոյանում, որոնցով սոցիալական կողմնորոշման գործիչները միջավայր են փոփոխում:

Մեզանում փորձ է արվում հակառակն իրականացնել: Ասենք, երեւանյան տրոլեյբուսներում երթեւեկի վճարը 50 դրամ էր, որը բարեփոխումներ հռչակվածից հետո դարձվեց... 150 դրամ: Արդյունքում՝ այդ հսկայական տրանսպորտային միջոցներն օրվա հիմնական մասում մի քանի ուղեւորով անցնում են մայրաքաղաքի փողոցներով, պարզ չէ ինչ օգուտ տալով մայրաքաղաքի բյուջեին: Օրեր առաջ քաղաքապետի մի ակնարկից պարզվեց, որ ՀՀ կառավարությունը սուբսիդավորում է նաեւ այս ոլորտը: Ստացվում է, որ գումարները ծախսվում են, իսկ խնդիրները մնում, նվազելու փոխարեն ահագնանում:

Այսպես էլ ապրում ենք, ինչ-որ ժամանակներ հիշելով ու դասափետելով, սեփական խնդիրներն անտեսելով, սիզիֆյան աշխատանքով առաջնորդվելով. մեր հոգսերը կարծես մերը չեն: Արդյունքում՝ անգամ թշնամիների փնտրտուք, առանց... ամոթի:

## Իմաստաբանական բառարան

## *Հայի զգեստապահարանը*

Հայի ազգային հագուստը (հայկական տարազը) մեր ժողովրդի մտածողության արտացոլանքն է՝ հայի ինքնությունը բնութագրող կարեւոր ազդակներից մեկը, եւ իր բազմազանությամբ նման է մեր բազմաբարբառ լեզվին:

Եվ թեեւ աշխարհի ամենահին ոտնամանը հայտնաբերվել է Արենիի քարանձավային համալիրում, բայց չգիտես ինչու այդ կարեւորագույն հանդերձանքը մենք ժամանակին ձեռք ենք բերել իրանական «տոնավաճառից»՝ այն անվանելով **ԿՈՇԻԿ**, որը միջին պարսկերենում ունեցել է kafšak ձեւը (վկա՝ ժամանակակից պարսկերենի kafsh բառը):

Համաձայն եմ՝ Արենիի քարանձավում հայտնաբերված ամենահին հայկական կոշիկը հագնելիս հայն անմիջապես իր ոտքի թաթերն ու սրունքները ծածկող գործվածք չի օգտագործել, բայց հետագայում, երբ նման հանդերձանքը նորաձեւ է դարձել, հայը դարձյալ դիմել է օտարերկրյա տոնավաճառներին: Այս անգամ այդ հանդերձանքը ձեռք ենք բերել Հին Ասորեստանի շուկայից եւ ասորերեն **gurpa** բառը դարձրել **ԳՈՒԼՊԱ**:

Արենիի քարանձավային համալիրում աշխարհի առաջին ոտնամանը հայտնաբերվելուց մեկ տարի անց գտնվել է նաեւ մ.թ.ա. 3900 թ.-ին վերագրվող կանացի առաջին կիսաշրջազգեստը, որը նույնպես մենք ձեռք ենք բերել իրանական «տոնավաճառից» եւ պահլավերեն **p** բառը հայերենով դարձրել **ՓԵՇ**:

Չնայած մեր քարանձավներում դեռ չի հայտնաբերվել տղամարդու մարմնի վերեւի մասը քողարկող առաջին զգեստը, սակայն հայտնաբերվելու դեպքում այն, հաստատ, կոչվելու էր **ՇԱՊԻԿ**, քանի որ այդ զգեստը վերցնելու էինք իրանցիներից՝ զրադաշտականների նվիրական հանդերձանք համարվող šapik բառից:

Բժշկական **ԽԱԼԱԹ**-ն էլ ներմուծելու էինք Արեւելքից՝ հավանաբար արաբերենին տիրապետող հայ բժշկապետեր **Մխիթար Հերացու** եւ **Ամիրդովլաթ Ամասիացու** շնորհիվ:

Այնուամենայնիվ, մեր հարուստ ու հագեցած զգեստապահարանում ամենագլխավոր հանդերձանքը վերապահվելու էր **ԾԻՐԱՆԵՆՈՒՆ**՝ թագավորական անթեւ վերնազգեստին, որի հայկական ծագման վերաբերյալ գրեթե կասկածներ չկան:

**Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա,
Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 02.04.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: